



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 21(412) 25 օգոստոսի 2020թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
487	«Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր պետական պարգևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-130-Ն հրամանագիրը.....	4
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
488	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 332-Ն որոշումը.....	9
489	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 333-Ն որոշումը.....	11
490	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N 34-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 335-Ն որոշումը.....	12
491	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի N 168 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 336-Ն որոշումը.....	13
492	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 346-Ն որոշումը.....	16
493	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 23-ի N 374 որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 348-Ն որոշումը.....	18
494	«Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Էրքեզ համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, Նոր Էրքեզ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու, անցկացնելու և ընտրության նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ԱՀ կառավարության N 349-Ն որոշումը.....	19

495	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի N 353-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 354-Ն որոշումը.....	21
496	«Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 358-Ն որոշումը.....	22
497	«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 359-Ն որոշումը.....	31
498	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 369-Ն որոշումը.....	32
499	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 370-Ն որոշումը.....	33
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
500	««Վիլեն Սարգսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 236-Ա հրամանը.....	43
501	««Պետրոսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 237-Ա հրամանը	44
502	«Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա տրամադրելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 169 հրամանը.....	45
503	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 128 հրամանը.....	46
504	«Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի N 167-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարի N 120-Ն հրամանը.....	47

505	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի հուլիսի 23-ի N 112-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի N 010-Ն հրամանը.....	57
506	«Արցախի Հանրապետության ոստիկանության պետի 2018 թվականի նոյեմբերի 5-ի N 3-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ոստիկանության պետի N 5-Ն հրամանը...	58
	ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ	
507	ԱՀ Գերագույն դատարանի վարչական գործ ԸԻԴ/0047/05/20 որոշումը	63

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԿԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածի 7-րդ կետով՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Ստեղծել Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր պետական պարզևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2008 թվականի ապրիլի 3-ի «Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր պետական պարզևների շնորհման հարցերի հանձնաժողովի նոր կազմի մասին» ՆՀ-31 և 2008 թվականի հունիսի 17-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահին առընթեր պետական պարզևների շնորհման հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» ՆՀ-75 հրամանագրերը:

5. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. օգոստոսի 17
Ստեփանակերտ
ՆՀ-130-Ն

Կ Ա Ջ Մ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌՈՂԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՎԱԿՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Արթուր Բաբկենի Թովմասյան	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ (հանձնաժողովի նախագահ, համաձայնությամբ)
Կամո Աբգարի Աղաջանյան	Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն
Ֆելիքս Միքայելի Գաբրիելյան	Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահ
Ժաննա Գեորգիի Գալստյան	հասարակական-քաղաքական գործիչ (համաձայնությամբ)
Սամվել Զամիլի Կարապետյան	«Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Աշոտ Մելիկի Հակոբջանյան	Արցախի Հանրապետության ոստիկանության պետ
Լուսինե Գաչայի Ղարախանյան	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարար
Սամվել Սերգեյի Շահրամանյան	Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարար
Կամո Բահատուրի Վարդանյան	Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ-շտաբի պետ
Մարգարիտա Հենրիկի Գասպարյան	Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության պարզևների և կոչումների բաժնի վարիչ (հանձնաժողովի քարտուղար):

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵՎԱՎԱՐ՝**

Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԾՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են Արցախի Հանրապետության Նախագահին առնթեր պետական պարզևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթները, գործունեության կազմակերպման, աշխատակարգային որոշումների և խորհրդատվական եզրակացությունների ընդունման կարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն աշխատակարգով:

3. Հանձնաժողովի կազմը, աշխատակարգը հաստատում և փոփոխում է Արցախի Հանրապետության Նախագահը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

4. Հանձնաժողովը Արցախի Հանրապետության Նախագահին տրամադրում է Հանրապետության Նախագահի՝ պետական պարզևներով պարգևատրելու կամ պատվավոր կոչումներ շնորհելու նախաձեռնության և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված պետական պարզևների կամ պատվավոր կոչումների շնորհման առաջարկությունների վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն:

5. Հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

6. Հանձնաժողովը պետական պարզևների կամ պատվավոր կոչումների շնորհման վերաբերյալ հարցերի քննարկումն իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահի կողմից դրանք քննարկման ներկայացվելու դեպքում:

7. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է հանձնաժողովի նիստերը.

2) հաստատում է հանձնաժողովի նիստերի օրակարգը.

3) ստորագրում է հանձնաժողովի աշխատակարգային որոշումները և խորհրդատվական եզրակացությունները.

4) հանձնաժողովի նիստերին կարող է հրավիրել այլ անձանց.

5) իրականացնում է հանձնաժողովի ընթացիկ գործունեության ղեկավարմանն ուղղված այլ գործառույթներ:

8. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ՝ անդամներից որևէ մեկը: Հանձնաժողովի նախագահին փոխարինող հանձնաժողովի անդամի ձայնը քվեարկության ժամանակ հաշվարկվում է միայն որպես հանձնաժողովի նախագահի ձայն:

9. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին և դրանցում անցկացվող քվեարկությանը.

2) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ զեկուցում է հարցը.

3) կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ գործողություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով (այդ թվում՝ հեռավար):
11. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:
12. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով, որում նշվում են՝
 - 1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.
 - 2) քննարկման ենթակա հարցերը.
 - 3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի անունը, ազգանունը:
13. Նիստի օրակարգն անհրաժեշտ նյութերով հանձնաժողովի անդամներին է ներկայացվում ոչ ուշ, քան նիստից երկու օր առաջ:
14. Օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ նոր նյութեր ստանալու դեպքում դրանք անհապաղ ուղարկվում են հանձնաժողովի անդամներին:
15. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
16. Յուրաքանչյուր հարցի քննարկման ավարտից հետո հանձնաժողովում տեղի է ունենում բաց քվեարկություն: Հանձնաժողովի անդամը քվեարկում է «կողմ» կամ «դեմ»: Եթե քննարկվող հարցը վերաբերում է հանձնաժողովի անդամին, ապա սովյալ անձը չի մասնակցում քվեարկությանը:
17. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը:
18. Հանձնաժողովի կողմից ընդունված խորհրդատվական եզրակացությունը ներկայացվում է Արցախի Հանրապետության Նախագահին:
19. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը և արտահայտված դիրքորոշումները ենթակա չեն հրապարակման:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հանձնաժողովն ընդունում է աշխատակարգային որոշումներ և խորհրդատվական եզրակացություններ:
21. Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ լուծվում են հանձնաժողովի գործունեության կազմակերպման հետ կապված հարցերը:
22. Հանձնաժողովի աշխատակարգային որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:
23. Հանձնաժողովի խորհրդատվական եզրակացություններն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նիստը նախագահողի ձայնը որոշիչ է:
24. Ընդունված խորհրդատվական եզրակացությունից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել հատուկ գրավոր կարծիք: Հատուկ կարծիքը ներկայացվում է հանձնաժողովի նիստում՝ այն ներկայացնող հանձնաժողովի անդամի ստորագրությամբ, և կցվում է արձանագրությանը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

25. Հանձնաժողովի գործունեությունն ապահովում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության պարզևների և կոչումների բաժինը (այսուհետ՝ աշխատակազմ):
26. Աշխատակազմը՝
 - 1) ապահովում է հանձնաժողովի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումը.
 - 2) հանձնաժողովին է ներկայացնում պետական պարզևներով պարզևատրելու կամ պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ Արցախի Հանրապետության Նախագահին ներկայացված առաջարկությունները կամ հայտնում Արցախի

Հանրապետության Նախագահի նախաձեռնության մասին՝ փոխանցելով վերաբերելի նյութերը.

3) անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր ստանալու նպատակով հարցումներ է ուղղում պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և անձանց.

4) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրումը և արձանագրությունների պահպանումը.

5) ապահովում է հանձնաժողովի խորհրդատվական եզրակացության փոխանցումը Արցախի Հանրապետության Նախագահին.

6) ապահովում է հանձնաժողովի նիստի օրակարգի և նյութերի փոխանցումը հանձնաժողովի անդամներին.

7) կատարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովմանն ուղղված այլ գործողություններ:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ.ՂԱՆԻՆԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2020թ.

N 332-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ այդ թվում՝	-	-	-	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	(40 000,0)	(40 000,0)
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(40 000,0)	(40 000,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(40 000,0)	(40 000,0)
		12	Ամուսնության միանվագ նպաստների տրամադրում	-	-	(40 000,0)	(40 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(40 000,0)	(40 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	-	40 000,0	40 000,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	40 000,0	40 000,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	40 000,0	40 000,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	40 000,0	40 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	40 000,0	40 000,0

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2020թ.

N 333-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի համայնքների վարչական սահմաններից դուրս, շրջանի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 4,544 հեկտար այլ հողատեսքերը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2020թ.

N 335-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի «Արցախի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 30-ի N 283 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 34-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «, նախաքննության», իսկ 8-րդ կետի 7-րդ ենթակետից՝ «, նախաքննություն» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2020թ.

N 336-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 168 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 27-ի «Առանձին մասնագիտությունների գծով ոստիկանությունում ծառայության անցնելու մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանելու մասին» N 168 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի օգոստոսի 13-ի N 336-Ն որոշման

«Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2004 թվականի ապրիլի
27-ի N 168 որոշման

**ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴԲԱՆՑ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Ոստիկանությունում ծառայության անցնելու համար առանձին մասնագիտությունները	Առավելագույն տարիքային սահմանափակումը
1.	Իրավաբանական ծառայության պաշտոններ	Իրավագիտություն	40
2.	Ֆինանսական ծառայության պաշտոններ	Տնտեսագիտություն, կառավարում, ֆինանսներ, հաշվապահական հաշվառում և հարկում, շուկայագիտություն (մարքեթինգ), իրավագիտություն, ագրոէկոնոմիկա, ագրոբիզնես, մաթեմատիկա, ֆինանսական մաթեմատիկա	40
3.	Տնտեսական ծառայության պաշտոններ	Տնտեսագիտություն, կառավարում, շուկայագիտություն (մարքեթինգ), մեքենագիտություն, ճարտարապետություն, շինարարություն, տրանսպորտային համակարգեր, իրավագիտություն, տրանսպորտային մեքենաշինություն, քաղաքային տնտեսություն, դիզայն, կենսագործունեության անվտանգություն, էներգետիկա, էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, ավտոմատացում, տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա	40
4.	Ինֆորմացիոն և համակարգչային համակարգեր կիրառող, ծրագրային ապահովում և տեխնիկական սպասարկում իրականացնող, օպերատիվ-տեղեկատվական վերլուծության ծառայության պաշտոններ	Մաթեմատիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական անվտանգություն, ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), էլեկտրոնիկա, ռադիոֆիզիկա, տեղեկատվական համակարգեր, ֆիզիկա, ֆինանսական մաթեմատիկա, ռադիոտեխնիկա և կապ, ավտոմատացում, արխիվավարություն, վիճակագրություն, ծրագրային ճարտարագիտություն, համակարգչային ճարտարագիտություն, իրավագիտություն	40
5.	Փորձաքրեագիտական ծառայության պաշտոններ	Իրավագիտություն, ֆիզիկա, քիմիա, մեխանիկա, տնտեսագիտություն, կառավարում, հաշվապահական հաշվառում և հարկում, կենսաբանություն, քիմիական տեխնոլոգիա, ֆարմացիա, պարենամթերքի տեխնոլոգիա, անասնաբուժություն, ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), մաթեմատիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական անվտանգություն, էլեկտրոնիկա, ռադիոտեխնիկա և կապ, ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), տրանսպորտային մեքենաշինություն և նյութերի մշակում, տրանսպորտային համակարգեր, գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ, փիլիսոփայություն, հոգեբանություն, հայոց լեզու և	40

		գրականություն, լեզվաբանություն, մեքենագիտություն, կերպարվեստ, մշակութաբանություն, արվեստի տեսություն և պատմություն, ֆինանսներ, շուկայագիտություն (մարքեթինգ), շինարարություն, կենսաֆիզիկա, կենսաքիմիա, տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա	
6.	Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության պաշտոններ	Ռադիոտեխնիկա և կապ, ինֆորմատիկա (համակարգչային գիտություն), էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, ռադիոֆիզիկա, տեղեկատվական անվտանգություն, տեղեկատվական համակարգեր, մաթեմատիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ֆիզիկա, ֆինանսական մաթեմատիկա, ավտոմատացում, կառավարում, իրավագիտություն, ծրագրային ճարտարագիտություն, համակարգչային ճարտարագիտություն, մեխանիկա	40
7.	Հասարակայնության հետ կապի և լրատվական ծառայության պաշտոններ	Իրավագիտություն, լրագրություն, հասարակայնության հետ կապեր, հայոց լեզու և գրականություն, կինոարվեստ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, լեզվաբանություն, տեղեկատվական անվտանգություն, դիզայն, էլեկտրոնիկա, ռադիոտեխնիկա և կապ, տեսալսողական արվեստ, մեդիաարվեստ, արվեստի տեսություն և պատմություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն, վիճակագրություն	40
8.	Բժշկական ծառայության պաշտոններ	Բուժական գործ, բուժական գործ զինված ուժերում, ստոմատոլոգիա, կենսաքիմիա, հանրային առողջություն և առողջապահություն, ֆարմացիա, հոգեբանություն	40

»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2020թ.

N 346-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	6 000,0	6 000,0
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	6 000,0	6 000,0
		05	Դրամական (նյութական) օգնություն սոցիալապես անապահով քաղաքացիներին և քնտանիքներին	-	-	56 000,0	56 000,0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	56 000,0	56 000,0
		06	ԱՀ-ում ծնելիության խթանում	-	-	(50 000,0)	(50 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(50 000,0)	(50 000,0)
	9		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	-	-	(6 000,0)	(6 000,0)
		2	Սոցիալական պաշտպանությունը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	(6 000,0)	(6 000,0)
		07	Առողջարանային բուժման և հանգստյան տների ուղեգրերի ձեռքբերում	-	-	(6 000,0)	(6 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(6 000,0)	(6 000,0)

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

17 օգոստոսի 2020թ.

N 348-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 374 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 23-ի «Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» N 374 որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) N 1 ցուցակը «U-47700 (3,4-դիքլոր-N-[(1R,2R)-2-(դիմեթիլամինո)ցիկլոհեքսիլ]-N-մեթիլբենզամիդ]» բառերից հետո լրացնել՝

«MDMB (N)-073-F (մեթիլ 3,3-դիմեթիլ-2-(1-(4-ֆտորոբուրիլ)-1H-ինդազոլ-3-կարբոքսամիդո) բութանոատ)

MDMB (N)-073 մեթիլ 2-[(1-բութիլինդազոլ-3-կարբոնիլ)ամինո]-3,3-դիմեթիլբութանոատ

MMB-022 մեթիլ-3-մեթիլ-2-(1-(պենտ-4-են-1-իլ)-1H-ինդոլ-3-կարբոքսամիդո) բութանոատ

AEB-FUBINACA (EMB-FUBINACA) էթիլ (1-(4-ֆտորոբենզիլ)-1H-ինդազոլ-3-կարբոնիլ) -L-վալինատ

N-մեթիլէֆեդրոն (Metamfetamone, dimethylcathinone, dimethylpropion,) կամ (2-(դիմեթիլամինո)-1-ֆենիլ-1-պրոպանոն)

N-ETHYLNORPENTYLONE (Ephylone) (1-(2H-1,3-բենզոդիոքսոլ-5-իլ)-2-(էթիլամինո) պենտան-1-ոն)

CUMYL-4CN-BINACA(1-(4-ցիանոբուրիլ)-N-(2-ֆենիլպրոպան-2-իլ)-1H-ինդազոլ - 3-կարբոքսամիդ)» բառերը.

2) N2 ցուցակը «Դիֆենօքսիլատ» բառից հետո լրացնել ««Դրոնաբինոլ (միայն(-)-տրանս-դելտա-9-տետրահիդրոկանաբինոլ) ստերեոիզոմերը)» բառերը.

3) N3 ցուցակից հանել ««Դրոնաբինոլ (միայն (-)-տրանս-դելտա-9-տետրահիդրոկանաբինոլ) ստերեոիզոմերը)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2020թ.

N 349-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ԷՐՔԵՉ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՆՈՐ ԷՐՔԵՉ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, 140-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Վաղաժամկետ դադարեցնել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ համայնքի ղեկավար Ժորա Համոյի Սիրունյանի լիազորությունները:

2. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ համայնքում նշանակել համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշման 2-րդ կետում նշված համայնքում արտահերթ ընտրության նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին հատկացնել 297 968 (երկու հարյուր հինսունյոթ հազար ինը հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ
ՆՈՐ ԷՐՔԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱՄԱՍՍՅՈՒՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ
ԾԱԽՍԵՐԻ՝ ԿԱՌՎԱԾ ՆՈՐ ԷՐՔԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ**

(ՀՀ դրամ)

Հոդ- ված	Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով	Գու- մարդ
4115	Աշխատավարձի ֆոնդ (փոխհատուցում) այդ թվում՝ ՏեղԸՀ նախագահ 1 մարդ x 1 ամիս x 54 400 դրամ = 54 400 դրամ ՏեղԸՀ նախագահի տեղակալ և քարտուղար 2 մարդ x 1 ամիս x 1 տեղ x 34 000 դրամ = 68 000 դրամ ՏեղԸՀ անդամներ 5 մարդ x 1 ամիս x 1 տեղ x 20 400 դրամ=102 000 դրամ	224 400 54 400 68 000 102 000
4214	Կապի ծառայություններ	1 000
	ՏեղԸՀ – 1 տեղ x 1 000 դրամ = 1 000 դրամ	1 000
4234	Տեղեկատվական ծառայություններ	21 368
	Այդ թվում՝	
	արձանագրությունների ձևեր 1 տեղ x50 հատx20դրամx1տեղ =1 000 դրամ	1 000
	քվեաթերթիկների տպագրություն հ/դ 76 հատ x 18 դրամ = 1 368 դրամ	1 368
	քվեարկության կարգը (պլակատ) 1 հատ x 800 դրամ = 800 դրամ	800
	վկայականների ձևեր 1 տեղ x 20 հատ x 150 դրամ = 3 000 դրամ	3 000
	ուղեցույց 1 հատ x 1 200 դրամ = 1 200 դրամ	1 200
	զրանցամատյան 1 հատ x 1 500 դրամ = 1 500 դրամ	1 500
	պաստառ 1 հատ x 5 մ x 2 500 դրամ = 12 500 դրամ	12 500
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	4 700
	Գրիչներ ընտրողներին 74 հատ x 50 դրամ = 3 700 դրամ	3 700
	Գրասենյակային նյութեր 1 տեղ x 1 000 դրամ = 1 000 դրամ	1 000
4264	Տրանսպորտային նյութեր	46 500
	Բենզին 150 լիտր x 310 դրամ = 46 500 դրամ	
	ԸՆԴԱՄԵՆԸ	297 968

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2020թ.

N 354-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 353-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 8-ի «Արցախի Հանրապետության գյուղական կամ քաղաքային՝ բացառությամբ Ստեփանակերտ և Շուշի քաղաքների, բնակավայրերում մշտապես բնակվող երիտասարդ ընտանիքներին բնակելի տներ կառուցելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 353-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

1) 4-րդ կետի 1-ին ենթակետում «40» թիվը փոխարինել «50» թվով, իսկ 6-րդ ենթակետում «հարցերի և վերաբնակեցման» բառերը՝ «և բնակարանային հարցերի» բառերով.

2) 13-րդ կետում «3 000 000 (երեք միլիոն)» բառերը փոխարինել «5 000 000 (հինգ միլիոն)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2020թ.

N 358-Ն

ք. Ստեփանակերտ

**ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ռ ր ռ շ ու մ է***

1. Սահմանել՝

1) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մեթոդների տարատեսակները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգն ու բժշկական գործելակերպը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ**

1. Արհեստական սերմնավորում, որը տղամարդու սերմի (սպերմայի) արհեստական ճանապարհով ներմուծումն է կնոջ օրգանիզմ: Տարատեսակներն են՝

- 1) արհեստական սերմնավորում՝ ամուսնու սերմնահեղուկով:
- 2) արհեստական սերմնավորում՝ դոնորական սերմնահեղուկով:

2. Արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորում, որը կնոջ օրգանիզմից դուրս արհեստական եղանակով սպերմատոզոիդի և ձվաբջջի կորիզանյութերի միավորումն է և արդյունքում առաջացած սաղմի (դոնորական սաղմի) փորձանոթային զարգացումն ու ներպատվաստումն արգանդի խոռոչ, որի տարատեսակներն են՝

1) զույգի՝ տղամարդու սպերմատոզոիդի և կնոջ ձվաբջջի կորիզանյութերի միավորմամբ սաղմի ստացում, փորձանոթային զարգացում և ներպատվաստումն արգանդի խոռոչ:

2) զույգի՝ տղամարդու (տղամարդու) և դոնոր կնոջ ձվաբջջի կորիզանյութերի միավորմամբ սաղմի ստացում, փորձանոթային զարգացում ու ներպատվաստումն արգանդի խոռոչ:

3) զույգի՝ կնոջ (կնոջ) և դոնոր տղամարդու սպերմատոզոիդների կորիզանյութերի միավորմամբ սաղմի ստացում, փորձանոթային զարգացում ու ներպատվաստումն արգանդի խոռոչ:

4) ձվաբջջի ցիտոպլազմայի մեջ սպերմատոզոիդի ներարկում, որը բեղմնավորման նպատակով մեկական սպերմատոզոիդի ներարկումն է անմիջապես ձվաբջջի մեջ, արդյունքում առաջացած սաղմի փորձանոթային զարգացումն ու ներպատվաստումն արգանդի խոռոչ:

3. Փոխնակ մայրություն, որը դոնորական սաղմի ներպատվաստումն է ոչ կենսաբանական/փոխնակ մոր արգանդի խոռոչում, որի տարատեսակներն են՝

1) ամուսնական զույգի սպերմատոզոիդի և ձվաբջջի կորիզանյութերի միավորման արդյունքում առաջացած սաղմի (դոնորական սաղմի) փորձանոթային զարգացում ու ներպատվաստում փոխնակ մոր արգանդի խոռոչ:

2) ամուսնական զույգի կնոջ ձվաբջջի և դոնոր տղամարդու սպերմատոզոիդի կորիզանյութերի միավորմամբ ստացված սաղմի փորձանոթային զարգացում ու ներպատվաստում փոխնակ մոր արգանդի խոռոչ:

3) ամուսնական զույգի տղամարդու սպերմատոզոիդի և դոնոր կնոջ ձվաբջջի կորիզանյութերի միավորմամբ ստացված սաղմի փորձանոթային զարգացում ու ներպատվաստում փոխնակ մոր արգանդի խոռոչ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

**ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման և բժշկական գործելակերպի հետ կապված հարաբերությունները:

2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ընթացակարգը կազմակերպական և մասնագիտական բժշկական գործընթացների ամբողջություն է:

3. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնում են բժշկական այն կազմակերպությունները, որոնք պահպանում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման համար օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված պայմանները և ունեն օրենքով սահմանված կարգով ստացված բժշկական օգնության և սպասարկման «վերարտադրողաբանական» («ռեպրոդուկտոլոգիական») տեսակով զբաղվելու լիցենզիա:

4. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները կիրառվում են պացիենտի (պացիենտների) իրազեկված համաձայնության առկայության և համապատասխան հակացուցումների բացակայության դեպքում:

5. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք այդ ծառայությունները մատուցող բժշկական կազմակերպությունների կողմից «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն նախապես իրազեկվում են օժանդակ տեխնոլոգիաների հետ կապված բժշկական և իրավական հարցերի, դրանց կիրառման մասնագիտական գործելակարգերի վերաբերյալ:

**2. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ**

6. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների բժշկական գործելակերպին ներկայացվող պահանջներն այդ տեխնոլոգիաների կիրառմանը ներկայացվող մասնագիտական պահանջներն են:

7. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման գործընթացում բեղմնավորման առանձին կամ բոլոր փուլերը և սաղմի (սաղմերի) վաղ զարգացումն իրականացվում է մարդու մարմնից դուրս:

8. Արհեստական սերմնավորման ժամանակ կատարվում է սերմնահեղուկի ներարկում արգանդի խոռոչ:

9. Չվագատման շեղումների դեպքում նախապես կատարվում է ձվարանների դեղորայքային խթանում, իսկ դաշտանային ձվագատական պարբերաշրջանների դեպքում՝ նաև առանց դեղորայքային խթանման, կատարվում է արհեստական սերմնավորում բնական դաշտանային պարբերաշրջանների ընթացքում:

10. Անհայտ դոնորի սերմնահեղուկով արհեստական սերմնավորման դեպքում թույլատրվում է միայն սառեցված սերմնահեղուկի օգտագործումը, իսկ ամուսնու կամ հայտնի դոնորի սերմնահեղուկով արհեստական սերմնավորման դեպքում կարող է օգտագործվել նաև բնական սերմնահեղուկ:

11. Արհեստական սերմնավորում կատարելու հակացուցումները՝

1) կնոջ կողմից՝

ա. ֆիզիկական և հոգեկան հիվանդություններ, որոնց ընթացքում հղիությունը հակացուցված է,

բ. արգանդի զարգացման արատներ,

- գ. ձվարանի ուռուցքներ,
դ. չարորակ գոյացություններ,
ե. սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ,
զ. սուր բորբոքային հիվանդություններ.
2) ամուսնու կողմից՝
ա. սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ,
բ. սուր վարակային հիվանդություններ:
12. Արհեստական սերմնավորման դեպքում հետազոտություններն իրականացվում են սույն գործելակերպի 23-րդ կետով սահմանված ծավալներին համապատասխան:
13. Արհեստական սերմնավորումն իրականացվում է նախաձվագատական փուլում՝ սերմի ներարկմամբ: Արհեստական սերմնավորման փորձերի քանակը որոշում է բժիշկը՝ մեկ տարվա ընթացքում առավելագույն վեց փորձերի հնարավորության պայմանով:
14. Արհեստական սերմնավորման հնարավոր բարդություններն են՝
1) ալերգիկ ռեակցիաներ ձվարանների դեղորայքային խթանումից.
2) շոկանման ռեակցիա՝ արգանդի խոռոչ սերմի ներարկման ժամանակ.
3) ձվարանների գերխթանման համախտանիշ.
4) կանանց սեռական օրգանների սուր բորբոքում կամ խրոնիկ բորբոքման սրացում.
5) բազմապտուղ կամ արտասարգանդային հղիություն:
15. Արտամարմնային բեղմնավորման իրականացումը հնարավոր է ձվարանների ձվագատման խթանման, ինչպես նաև բնական դաշտանային պարբերաշրջանում:
16. Արտամարմնային բեղմնավորման մեթոդի փուլերն են՝
1) հիվանդների ընտրություն և հետազոտությունների իրականացում.
2) ձվարանների ձվագատման խթանում՝ ներառյալ ֆոլիկուլների աճի և էնդոմետրիումի զարգացման մշտադիտարկում.
3) ձվարանների ֆոլիկուլներից ձվաբջիջների արտածում (պունկցիա).
4) ձվաբջիջների բեղմնավորում ամուսնու/դոնորի սպերմատոզոիդներով և ստացված սաղմերի աճեցում լաբորատոր (արհեստական/փորձանոթային) պայմաններում.
5) սաղմերի տեղափոխում արգանդի խոռոչ և օժանդակ հետշինգ.
6) լյութեինային փուլի «աջակցում».
7) հղիության ախտորոշում:
17. Արտամարմնային բեղմնավորման իրականացման հակացուցումներն են՝
1) մարմնական և հոգեկան հիվանդություններ, որոնց առկայության դեպքում հղիությունը և ծննդաբերությունը հակացուցված են.
2) արգանդի խոռոչի բնածին կամ ձեռքբերովի արատներ, որոնց դեպքում անհնար է սաղմերի պատվաստումը կամ հղիության կրումը.
3) ձվարանների ուռուցքներ.
4) արգանդի բարորակ ուռուցքներ, որոնք պահանջում են վիրահատական բուժում.
5) ցանկացած տեղայնացման սուր բորբոքային հիվանդություններ.
6) ցանկացած տեղակայման չարորակ ուռուցքներ:
18. Մինչ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող հետազոտությունների ծավալը ներառում է՝
1) հետազոտությունների պարտադիր ծավալը կանանց համար՝
ա. ընդհանուր և գինեկոլոգիական զննում,
բ. փոքր կոնքի օրգանների գերձայնային հետազոտում,
գ. արյան խմբի և ռեզուս-գործոնի որոշում,
դ. արյան ընդհանուր և կենսաքիմիական հետազոտություն՝ ներառյալ մակարդեղիության որոշումը (ուժի մեջ է մեկ ամիս),
ե. արյան հետազոտում՝ սիֆիլիս, մարդու իմունային անբավարարության վիրուս, հեպատիտ Բ և Ց (ուժի մեջ է երեք ամիս),
զ. միգուկի և արգանդի վզիկի խողովակից քսուքի մանրադիտակային հետազոտություն,
է. թերապևտի եզրակացություն առողջական վիճակի և հղիությունը կրելու կարողության վերաբերյալ,
ը. արգանդի վզիկի բջջաբանական քսուք (Պապանիկոլաուի քսուք),

թ. հորմոնների որոշում արյան մեջ ֆոլիկուլախթանիչ հորմոն, լյուտեինիզացնող հորմոն, պրոլակտին, կորտիզոլ, թիրոքսին, թիրոլին, թիրեոտրոպ, հակամյուլերային հորմոն,

ժ. սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (խլամիդիոզ, միկոպլազմոզ, ուրեապլազմոզ, հերպես, ցիտոմեգալիա, տոքսոպլազմոզ, կարմրախտ) հետազոտություն,

ժա. վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն.

2) կանանց հետազոտություններն ըստ ցուցումների՝

ա. արգանդի և փոշերի անատոմիական վիճակի ստուգում (հիստերոսալպինգոգրաֆիա, հիստերոսկոպիա, լսպարոսկոպիա),

բ. էնդոմետրիայի կենսազննում,

գ. հակասպերմային և հակաֆոսֆոլիպիդային հակամարմինների որոշում արյան մեջ,

դ. բժշկագենետիկ հետազոտություն՝ բժիշկ-գենետիկի խորհրդատվություն և ըստ ցուցումների կարիոտիպի որոշում,

ե. անհրաժեշտության դեպքում այլ մասնագետի եզրակացություն.

3) հետազոտությունների պարտադիր ծավալը տղամարդկանց համար՝

ա. արյան հետազոտություն՝ սիֆիլիս, մարդու իմունային անբավարարության վիրուս, հեպատիտ Բ և Ց (ուժի մեջ է երեք ամիս),

բ. սերմնահեղուկի քննություն.

4) տղամարդկանց հետազոտություններն ըստ ցուցումների՝

ա. արյան խմբի և ռեզուս-գործոնի որոշում,

բ. ուրլոզի կամ անդրոլոզի խորհրդատվություն,

գ. վարակների հետազոտում (խլամիդոզ, միկոպլազմոզ, ուրեոպլազմոզ, հերպես, ցիտոմեգալիա),

դ. բժշկագենետիկ հետազոտություն՝ բժիշկ-գենետիկի խորհրդատվություն և ըստ ցուցումների կարիոտիպի որոշում:

19. Չվազատման խթանման նպատակը մեկ դաշտանային պարբերաշրջանում մի քանի ֆոլիկուլների հասունացումն է:

20. Չվարանների ձվագատման խթանման սխեմայի ընտրությունը, ներարկվող դեղամիջոցները և դրանց չափաբաժինները, խթանման ընթացակարգի փոփոխությունը կատարվում է բժշկի կողմից՝ անհատական մոտեցման սկզբունքով:

21. Չվազատման խթանման ընթացքում օգտագործվող դեղերի խմբերն են՝

1) էստրոգենային ռեցեպտորների սելեկտիվ մոդուլատորներ.

2) մարդու դաշտանադարային գոնադոտրոպին.

3) ֆոլիկուլախթանիչ հորմոն.

4) ֆոլիկուլախթանիչ հորմոնի ռեկոմբինանտ.

5) լյուտեինիզացնող հորմոնի ռեկոմբինանտ.

6) մարդու խորիոնային գոնադոտրոպին.

7) գոնադոտրոպին ազատող հորմոնի ազոնիստներ.

8) գոնադոտրոպին ազատող հորմոնի անտագոնիստներ:

22. Ֆոլիկուլների և էնդոմետրիումի աճի մշտադիտարկման ընթացքում ֆոլիկուլների աճը և էնդոմետրիումի հաստությունը պարբերաբար հսկվում է արտամարմնային բեղմնավորման հաջորդ փուլին ժամանակին անցնելու նպատակով:

23. Մշտադիտարկման հիմնական մեթոդը գերձայնային հետազոտությունն է, որի ընթացքում հաստատվում է ֆոլիկուլների քանակը, կատարվում են նրանց միջին տրամագծի չափումները, չափվում է էնդոմետրիումի հաստությունը:

24. Խթանող դեղերի նկատմամբ ձվարանների ռեակցիայի գնահատման և չափաբաժնի կարգավորման նպատակով իրականացվում է պարբերական գերձայնային հսկողություն:

25. Չվազատման ախտորոշման նպատակով, ըստ ցուցումների, կնոջը նշանակվում է արյան հետազոտում՝ էստրադիոլի և պրոգեստերոնի պարունակությունն որոշելու նպատակով (բնականոն ընթացքի դեպքում էստրադիոլի մակարդակն աճում է ֆոլիկուլի հասունացմանը զուգահեռ, իսկ պրոգեստերոնի մակարդակը մնում է ցածր մակարդակի վրա մինչև ձվագատման պահը):

26. Չվազատման խթանումը դադարեցվում է, երբ՝

1) ամենահասուն ֆոլիկուլի (ֆոլիկուլների) միջին տրամագիծը կազմում է 17 մմ և ավելի և էնդոմետրիումի հաստությունը 7 մմ և ավելի է.

2) Էնդամետրիումն ունի եռաշերտ կառուցվածք:

27. Չվարանների ֆոլիկուլների պունկցիան կատարվում է մարդու խորիոնային գոնադոտրոպինի ներարկումից 32-40 ժամ անց:

28. Պունկցիան կատարվում է ամբուլատոր, փոքր վիրահատարանի պայմաններում: Պունկցիան իրականացվում է հատուկ պունկցիոն ասեղներով, պարտադիր գերձայնային հսկողության տակ ներհեշտոցային եղանակով:

29. Ներհեշտոցային պունկցիայի անհնարինության դեպքում ձվաբջիջները կարող են ստացվել՝ օգտագործելով լապարոսկոպիկ մեթոդները:

30. Արտամարմնային բեղմնավորում իրականացնելու նպատակով սերմնաբջիջների անհայտ դոնորի ընտրությունը պացիենտների կողմից կատարվում է ինքնակամ, ֆենոտիպի նկարագրության հիման վրա:

31. Արտամարմնային բեղմնավորման իրականացման ժամանակ օգտագործվում է հատուկ մշակված սերմնահեղուկ (ամուսնու կամ դոնորի):

32. Սերմնահեղուկի հանձնումից առաջ տղամարդուն խորհուրդ է տրվում ժուժկալություն, այսինքն ձեռնպահ մնալ սեռական հարաբերությունից 3-5 օր:

33. Սերմնահեղուկը հավաքվում է հատուկ նշագրված և ստերիլ տարայում:

34. Ստացված սերմնահեղուկը կարող է նաև կրիոկոնսերվացվել, հետագայում օգտագործելու նպատակով:

35. Չվաբջիջների բեղմնավորումը և ստացված սաղմերի աճեցումը լաբորատոր (արհեստական/փորձանոթային) պայմաններում՝

1) ֆոլիկուլների պունկցիայից հետո ձվաբջիջներ պարունակող ֆոլիկուլինային հեղուկն անմիջապես փոխանցվում է սաղմնաբանական լաբորատորիա, որտեղ գնահատվում է ձվաբջիջների որակը ստերեոմանրադիտակի օգնությամբ (10 և ավելի անգամյա մեծացումով):

2) առանձնացվում և ընտրվում են ձվաբջիջները:

3) շարժունակ սպերմատոզոիդների որոշակի քանակությունը խառնում են ձվաբջիջների հետ և տեղադրում են ածխաթթու գազով ինկուբատորի մեջ, որտեղ ապահովվում է ածխաթթու գազի, ջերմաստիճանի և խոնավության կայուն մակարդակ:

4) ապաստեցված կամ նատիվ (թարմ) սերմնահեղուկը մշակվում է ցենտրիֆուգումով՝ ֆլոտացիոն կամ խտության գրադիենտի մեթոդներով:

5) բեղմնավորման առկայությունը գնահատվում է 12-18 ժամ հետո, երբ սեռաբջիջների պրոնուկլեուսը հստակ երևում է:

6) զիգոտաները տեղափոխվում են թարմ սնուցող միջավայր, որտեղ տեղի է ունենում սաղմերի հետագա զարգացումը:

36. Մինչև սաղմի (սաղմերի) տեղափոխումն արգանդի խոռոչ, ըստ բժշկական ցուցումների իրականացվում է՝

1) նախաիմպլանտացիոն բժշկագենետիկ հետազոտություն և ախտորոշում:

2) սաղմի արտաքին թաղանթի պատռում (օժանդակ հետչինգ), որի նպատակն արգանդում սաղմի ներպատվաստման հավանականության բարձրացումն է:

37. Սաղմի/պտղի (սաղմերի/պտուղների) տեղափոխումն արգանդի խոռոչ իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) տեղադրում՝ նրանց աճի տարբեր փուլերում, սկսած 4 բլաստոմերների փուլից և վերջացրած բլաստոցիստի փուլով, որը ձևավորվում է բեղմնավորումից 5-6 օր հետո:

2) հղիության արդյունավետ ելքերի ապահովման նպատակով թույլատրելի է արգանդի խոռոչում 3-ից ոչ ավելի սաղմի/պտղի տեղադրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ինվանտացիայի հավանականությունը գնահատվել է ցածր:

3) սաղմերի տեղափոխումն արգանդի խոռոչ իրականացվում է արգանդի պարանոցի խողովակով՝ հատուկ կատետրների միջոցով:

4) այն դեպքում, երբ արգանդի պարանոցի խողովակի անցանելիությունը խանգարված է, սաղմերի տեղափոխումն իրականացվում է արգանդի պատով (տրանսվագինալ, տրանսսաբդոմինալ կամ տրանսուրետրալ ճանապարհով):

38. Լյութեինային փուլի «աջակցում»-ը կատարվում է պրոգեստերոնի կամ նմանատիպ դեղերով:

39. Չվարանների գերխթանման համախտանիշի հավանականության բացակայության դեպքում լյութեինային փուլի «աջակցում»-ը կատարվում է անհատական մոտեցմամբ և կարող է ներառել մարդու խորիոնային գոնադոտրոպինի ներարկում, որը նշանակվում է սաղմերի տեղափոխման նույն օրը՝ հետագայում 2-4 օրվա միջակայքով:

40. Հղիության վաղ ախտորոշումն իրականացվում է սաղմերի տեղափոխումից 12-14 օր հետո՝ որոշելով մարդու բետախորիոնային գոնադոտրոպինի խտությունն արյան մեջ:

41. Հղիության գերձայնային ախտորոշումն իրականացվում է սաղմի/սաղմերի տեղափոխումից հետո՝ 21-րդ օրը:

42. Արտամարմնային բեղմնավորման հնարավոր բարդություններն են՝

- 1) ձվարանների գերխթանման համախտանիշի առաջացում.
- 2) ալերգիկ ռեակցիաներ ներարկվող դեղամիջոցների նկատմամբ.
- 3) փոքր կոնքում բորբոքային պրոցեսների առաջացում կամ սրացում.
- 4) ձվարանների տրանսվագինալ պունկցիայի հետևանքով ներքին արյունահոսության առաջացում.

- 5) արտաքին արյունահոսության առաջացում.
- 6) արտարգանդային հղիություն.
- 7) բազմապտուղ հղիություն:

43. Չվաբջջի ցիտոպլազմայի մեջ սպերմատոզոիդի ներարկումը կատարվում է միկրոմանիպուլացիոն համակարգով և հատուկ միկրոգործիքներով հագեցված հակադարձված մանրադիտակի օգնությամբ:

44. Չվաբջջի ցիտոպլազմայի մեջ սպերմատոզոիդի ներարկման ցուցումներն են՝

1) ազոոսպերմիայի (սերմնահեղուկում սպերմատոզոիդների բացարձակ բացակայություն), տեստիկուլյար սերմնաբջջիչների օգտագործմամբ.

2) օլիգոզոոսպերմիա.

3) աստենոզոոսպերմիա.

4) տերատոզոոսպերմիա.

5) անտիսպերմային հակամարմինների առկայությունը սերմնահեղուկում (ախտորոշիչ թեստում համամարմինների տիտրն ավելի քան 50%).

6) ձվաբջջիչների անբավարար բեղմնավորումը նախկինում ստանդարտ արտամարմնային բեղմնավորման փորձի ընթացքում.

7) անբավարար քանակի և ցածր որակի կրիոսառնապահպանված սպերմատոզոիդների օգտագործման դեպքում.

8) այն դեպքում, երբ ակնկալվում է բեղմնավորման ցածր տոկոս ստանդարտ արտամարմնային բեղմնավորման փորձի ընթացքում, օրինակ՝ ծանր աստիճանի էնդոմետրիոզով կամ անհայտ ծագման անպտղությամբ տառապող զույգերի մոտ:

45. Չվաբջջի ցիտոպլազմայի մեջ սպերմատոզոիդի ներարկման մեթոդի հիմնական փուլերն են

1) մինչ ներարկման իրականացումը հետազոտվում է ձվաբջջի փայլող թագի բջիջները.

2) միկրոմանիպուլացիան իրականացնում են միայն հասուն ձվաբջջիչներով առաջին բնեռային մարմնի առկայության դեպքում.

3) սպերմատոզոիդի անշարժացումը պոչի թաղանթի վնասման միջոցով.

4) ձվաբջջի արտաքին ցիտոպլազմային թաղանթի ամբողջականության խախտում.

5) սպերմատոզոիդի ներարկում ձվաբջջի ցիտոպլազմա հատուկ ապակյա միկրոասեղով:

46. Սպերմատոզոիդների ստացման օպտիմալ մեթոդի ընտրությունը կատարվում է բժիշկ-անդրոլոգի կողմից՝ լրացուցիչ հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա: Սպերմատոզոիդների ստացման վիրաբուժական մեթոդներն են՝

1) ազոոսպերմիայի դեպքում սպերմատոզոիդները կարող են ստացվել ամորձու բաց բիոպսիայի մեթոդով՝ սպերմատոզոիդների հետագա կորզումով (էկստրակցիայով) կամ ամորձու հավելումների պարունակության ասպիրացիայի միջոցով, ինչպես նաև մակամորձու կամ ամորձու միջմաշկային ասպիրացիայի (արտածծող վիրահատական միջամտությունների) միջոցով.

2) վիրահատությունը հիմնականում կատարվում է ֆոլիկուլների պունկցիայի նույն օրը: Մերմնաբջջիչները, որոնք ստացվել են մակամորձուց, պահպանում են իրենց բեղմնավորման հատկությունը 12-24 ժամ, իսկ ամորձուց ստացված սերմնաբջջիչները՝ 48-72 ժամ, ինչը թույլ է տալիս որոշ դեպքերում փոխել այդ միջամտությունների իրականացման ժամանակը.

3) արտամարմնային բեղմնավորման ծրագրերում հնարավոր է նաև ամորձու կամ մակամորձու կրիոկոնսերվացված ասպիրատի և հյուսվածքի օգտագործումը: Այդ դեպքում հնարավոր է դառնում ամորձու բիոպսիան իրականացնել նախօրոք՝ չկապելով կնոջ պունկցիայի օրվա հետ:

47. Ամորձու բիոպսիայի իրականացման ցուցումներն են՝

- 1) օբստրուկտիվ ազոոսպերմիա.
- 2) առաջնային տեստիկուլյար անբավարարություն:

48. Միջամտության իրականացման հակացուցումն է ցանկացած տեղակայման սուր ինֆեկցիոն հիվանդությունը:

49. Ամորձու բիոպսիայի դեպքում անհրաժեշտ հետազոտությունների ծավալը՝

- 1) ուրոլոգի/անդրոլոգի խորհրդատվություն.
- 2) արյան խմբի և ռեզուս-գործոնի որոշում.
- 3) վարակների հետազոտում (խլամիդոզ, միկոպլազմոզ, ուրեոպլազմոզ, հերպես, ցիտոմեգալիա):

50. Բազմապտուղ (3 և ավելի) հղիության դեպքում հղիի դիմումի և իրազեկված գրավոր համաձայնությամբ կատարվում է զարգացող սաղմերի/պտուղների կրճատում (ռեդուկցիա) վիրահատական միջամտության միջոցով՝ կնոջ կողմից նշված քանակին համապատասխան, սակայն ոչ ավելի քան 3 սաղմ/պտուղ:

51. Սաղմերի/պտուղների թվի պահպանելու կամ հեռացնելու միջամտությունն իրականացվում է գերձայնային հետազոտության պայմաններում՝ մինչև հղիության 10 շաբաթական ժամկետը:

52. Սաղմի/պտղի հեռացման մեթոդի (տրանսվագինալ, տրանսցերվիկալ, տրանսաբդոմինալ) ընտրությունը կատարվում է ըստ ցուցումների՝ բուժող բժշկի կողմից:

53. Բազմապտության (3 և ավելի) դեպքում վիրահատական միջամտության հնարավոր բարդությունները՝

- 1) հղիության ընդհատման վտանգ.
- 2) սուր բորբոքային հիվանդություններ:

54. Սաղմի/պտղի վիրահատական հեռացման մեթոդի կիրառման դեպքում հղիի հետազոտության ծավալը.

- 1) արյան ընդհանուր հետազոտություն՝ ներառյալ մակարդելիության գործոնները.
- 2) հետազոտություններ ուղղված սուր սեռավարակների և վարակային այլ հիվանդությունների խիստորոշմանը՝ ըստ բժշկական ցուցումների.
- 3) սուր բորբոքային հիվանդությունների դեպքում ռեդուկցիային պետք է նախորդի հակաբակտերիալ կարճատև բուժում, թույլատրելի՝ հղիության համար հակացուցում չունեցող դեղամիջոցների կիրառմամբ:

55. Փոխնակ մայրություն մեթոդի իրականացման գործընթացը ներառում է կենսաբանական ծնողների/ամուսնական զույգի/ ծնողի կամ տղամարդ/կին դոնորների սեռաբջիջների կիրառմամբ արտամարմնական բեղմնավորման ճանապարհով դոնորական սաղմի ստացումը, սաղմի փորձանոթային աճեցումը և տեղափոխումը փոխնակ մոր արգանդի խոռոչ:

56. Փոխնակ մայրության հակացուցումներն են՝

- 1) ֆիզիկական և հոգեկան հիվանդություններ, որոնց առկայության դեպքում հղիությունը և ծննդաբերությունը հակացուցված են.
- 2) արգանդի խոռոչի բնածին կամ ձեռքբերովի արատներ, որոնց դեպքում անհնար է սաղմերի պատվաստումը կամ հղիության կրումը.
- 3) ձվարանների ուռուցքներ.
- 4) արգանդի բարորակ ուռուցքներ, որոնք պահանջում են վիրահատական բուժում.
- 5) ցանկացած տեղայնացման սուր բորբոքային հիվանդություններ.
- 6) ցանկացած տեղակայման չարորակ ուռուցքներ:

57. Փոխնակ մայրության համար պարտադիր հետազոտությունների ծավալը՝

- 1) ընդհանուր և զինեկոլոգիական զննում.
- 2) փոքր կոնքի օրգանների գերձայնային հետազոտում.
- 3) արյան խմբի և ռեզուս-գործոնի որոշում.
- 4) արյան ընդհանուր հետազոտություն՝ ներառյալ մակարդելիության գործոնները (ուժի մեջ է մեկ ամիս).
- 5) արյան հետազոտում՝ մարդու իմունային անբավարարության վիրուս, սիֆիլիս, հեպատիտ Բ և Ց (ուժի մեջ է երեք ամիս).
- 6) սեռական ճանապարհով փոխանցվող վարակների հետազոտություն (խլամիդոզ, միկոպլազմոզ, ուրեոպլազմոզ, հերպես, ցիտոմեգալիա, տոքսոպլազմա, կարմրախտ).

7) միգուկի և արգանդի վզիկի խողովակից քսուքի մանրադիտակային հետազոտություն.

8) թերապևտի եզրակացությունն առողջական վիճակի և հղիությունը կրելու կարողության վերաբերյալ.

9) արգանդի վզիկի բջջաբանական քսուք (Պապանիկոլաուի քսուք).

10) հորմոնների որոշում արյան մեջ՝ ըստ բժշկական ցուցումների:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2020թ.

N 359-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 22-ի «Հողային օրենսդրության կիրառման, հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունը Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը վերապահելու մասին» N 14, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 21-ի «Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում ԼՂՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունները Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը վերապահելու մասին» N 25, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 21-ի «Աշխարհագրական անվանումների բնագավառում պետական կառավարման մարմնի իրավասությունը Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը վերապահելու մասին» N 26, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության և շրջվարչակազմերի ղեկավարների հողային պետական տեսչական իրավասությունները սահմանազատելու մասին» N 501 որոշումների վերնագրերում և տեքստերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 17-ի «Հողային պաշարների պետական կառավարման լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 227 որոշման 1-ին կետի «ը» ենթակետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի «Անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և վերահսկող, ֆիզիկական անձանց անշարժ գույքի գնահատման մասնագիտական որակավորում իրականացնող լիազոր մարմին սահմանելու մասին» N 579 որոշման 1-ին կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՋ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 օգոստոսի 2020թ.

N 369-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Աջափնյակ 2-րդ զուգահեռ թիվ 15/2 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի նպատակային նշանակության 0,1535 հեկտար բնակելի կառուցապատման հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ պահեստարանների օբյեկտների հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի 2020թ.

N 370-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ և 7-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված N2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Որոշմամբ սահմանված N3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Որոշման 4-րդ կետի 5-րդ ենթակետում «64,949,399.2» թիվը փոխարինել «70,049,399.2» թվով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի օգոստոսի 11-ի ՀՕ-33-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՍԵՐ այդ թվում՝	-	-	8 423 468,8	14 810 000,0
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	(20 000,0)	(57 478,2)
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	-	-	(20 000,0)	(80 000,0)
		1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	-	-	40 000,0	-
		01	Օրենսդիր իշխանության մարմնի պահպանում	-	-	40 000,0	-
			ԱՀ Ազգային ժողով	-	-	40 000,0	-
		2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	-	-	-	-
		04	ԱՀ զանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր	-	-	-	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	(3 750,0)	(7 500,0)
			ԱՀ պետական եկամուտների կոմիտե	-	-	3 750,0	7 500,0
		3	Արտաքին հարաբերություններ	-	-	(60 000,0)	(80 000,0)
		02	Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ	-	-	(60 000,0)	(80 000,0)
			ԱՀ կառավարություն	-	-	(60 000,0)	(80 000,0)
	3		Ընդհանուր բնույթի ծառայություններ	-	-	-	800,0
		1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	-	-	-	800,0
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	-	-	800,0
			ԱՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	-	-	-	800,0
	6		Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	21 721,8

	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	21 721,8
	01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	-	-	1 721,8
		ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե	-	-	-	1 721,8
	04	«Գեոդեզիայի, քարտեզագրման, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ծառայությունների գնման գծով պետական պատվեր	-	-	-	20 000,0
		ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե	-	-	-	20 000,0
03		ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	-	-	-	360 000,0
	1	Հասարակական կարգ և անվտանգություն	-	-	-	360 000,0
	1	Ոստիկանություն	-	-	-	160 000,0
	01	Հասարակական կարգի պահպանության ապահովում	-	-	-	160 000,0
		ԱՀ ոստիկանություն	-	-	-	160 000,0
	2	Ազգային անվտանգություն	-	-	-	200 000,0
	01	Ազգային անվտանգության ապահովում	-	-	-	200 000,0
		ԱՀ ազգային անվտանգության ծառայություն	-	-	-	200 000,0
04		ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	1 329 000,0	2 322 400,0
	2	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և ռաբոդություն	-	-	903 000,0	1 500 000,0
	1	Գյուղատնտեսություն	-	-	903 000,0	1 500 000,0
	12	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	-	903 000,0	1 500 000,0
		ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	903 000,0	1 500 000,0
3		Վառելիք և էներգետիկա	-	-	-	100 000,0
	5	Էլեկտրաէներգիա	-	-	-	100 000,0
	01	Բնակչության կողմից սպառվող էլեկտրաէներգիայի ծախսերի որոշ մասի սուբսիդավորում	-	-	-	100 000,0
		ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	-	-	100 000,0
7		Այլ բնագավառներ	-	-	-	12 400,0
	2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	-	-	-	12 400,0
	01	Պատվիրակությունների ընդունելություններ	-	-	-	12 400,0
		ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	-	-	-	12 400,0

9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	426 000,0	710 000,0
	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	426 000,0	710 000,0
	04	Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով ԱՀ շրջանների կարողությունների զարգացման ծախսեր	-	-	426 000,0	710 000,0
		Ասկերանի շրջանի վարչակազմ	-	-	30 000,0	50 000,0
		Հաղորթի շրջանի վարչակազմ	-	-	105 000,0	175 000,0
		Մարտակերտի շրջանի վարչակազմ	-	-	60 000,0	100 000,0
		Մարտունու շրջանի վարչակազմ	-	-	90 000,0	150 000,0
		Շահումյանի շրջանի վարչակազմ	-	-	30 000,0	50 000,0
		Շուշիի շրջանի վարչակազմ	-	-	21 000,0	35 000,0
		Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	90 000,0	150 000,0
06		ԲՆԱԿԱՐԱՆՑԻՆ ԵՎ ԿՈՍՏՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	2 522 000,0	2 500 000,0
3		Ջրամատակարարում	-	-	2 522 000,0	2 500 000,0
	1	Ջրամատակարարում	-	-	2 522 000,0	2 500 000,0
	02	Ջրամբարների, ջրանցքների, ջրատարների վերանորոգում, վերականգնում և պահպանում	-	-	2 522 000,0	2 500 000,0
		ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	-	2 522 000,0	2 500 000,0
07		ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	-	-	15 650,0	400 000,0
2		Արտահիվանդանոցային ծառայություններ	-	-	-	125 778,3
	1	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	-	-	-	57 145,2
	01	Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	-	-	-	57 145,2
		ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	57 145,2
	2	Մասնագիտացված բժշկական ծառայություններ	-	-	-	26 445,7
	01	Մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	19 227,5
		ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	19 227,5
	02	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	7 218,2
		ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	7 218,2
	4	Պարաբժշկական ծառայություններ	-	-	-	42 187,4
	01	Շտապ բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	13 596,6
		ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	13 596,6
	02	Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ	-	-	-	3 816,8

			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	3 816,8
		03	Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ	-	-	-	15 172,3
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	15 172,3
		05	Անգիոգրաֆիայի անցկացման ծառայություններ	-	-	-	9 601,7
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	9 601,7
3			Հիվանդանոցային ծառայություններ	-	-	-	143 074,6
	1		Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	-	-	-	73 136,7
		01	Տեղամասային հիվանդանոցների հիվանդանոցային բուժօգնության գծով կատարած ծախսերի փոխհատուցում	-	-	-	3 752,5
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	3 752,5
		02	Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	18 537,5
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	18 537,5
		03	Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	50 846,7
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	50 846,7
	2		Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	-	-	-	25 938,7
		01	Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	6 575,7
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	6 575,7
		02	Մաշկային և սեռական ճանապարհներով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	2 458,0
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	2 458,0
		03	Հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	5 395,2
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	5 395,2
		04	Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ	-	-	-	3 356,2
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	3 356,2
		05	Չարորակ նորագոյացությունների բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	5 655,4
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	5 655,4
		06	Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	2 498,2

			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	2 498,2
	3		Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ	-	-	-	43 999,2
		01	Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	16 534,4
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	16 534,4
		02	Մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության ծառայություններ	-	-	-	27 464,8
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	27 464,8
4			Հանրային առողջապահական ծառայություններ	-	-	-	50 323,4
	1		Հանրային առողջապահական ծառայություններ	-	-	-	50 323,4
		01	Պետական աջակցություն «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	-	22 844,7
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	22 844,7
		02	Դոնորական արյան հետազոտությունների անցկացման ծառայություններ	-	-	-	790,4
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	790,4
		03	Պետական աջակցություն «Հակապալարախտային դիսպանսեր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	-	6 692,9
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	6 692,9
		04	Պետական աջակցություն «Ա.Բունիայանի անվան Քաջաթաղի շրջանային բուժմիավորում» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	-	15 706,2
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	15 706,2
		05	Պետական աջակցություն «Շահումյանի շրջանային բուժմիավորում» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	-	4 289,2
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	4 289,2
6			Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	-	-	15 650,0	80 823,7
	1		Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	-	-	15 650,0	80 823,7
		02	Պետական աջակցություն «Դատաբժշկական փորձաքննության բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	-	-	3 404,8
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	3 404,8

		03	ԱՀ առողջապահության նախարարության բժշկական պահեստ	-	-	-	603,9
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	603,9
		04	Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ծախսերի փոխհատուցում	-	-	15 650,0	62 506,9
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	15 650,0	62 506,9
		05	Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման ծառայություններ	-	-	-	9 749,7
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	9 749,7
		06	Մարզիկների բժշկական հետազոտությունների անցկացման ծառայություններ	-	-	-	1 128,6
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	1 128,6
		07	Բարեգործական ծրագրերի օժանդակություն	-	-	-	2 699,2
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	2 699,2
		08	Հաշմանդամ երեխաների առողջության վերականգնման ծառայություններ	-	-	-	427,9
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	427,9
		10	Աուտիզմի և մանկական ուղեղային կաթվածով տառապող հիվանդ երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ	-	-	-	302,7
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	-	302,7
08			ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	-	2 028,4
	3		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	-	-	-	2 028,4
		1	Հեռուստատալիոհաղորդումներ	-	-	-	2 028,4
		04	«Ձայն արդարության» ռադիոկայանի պահպանում	-	-	-	2 028,4
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	2 028,4
09			ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	-	-	(109 181,2)	89 546,8
	5		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	-	-	(27 440,2)	(27 440,2)
		2	Լրացուցիչ կրթություն	-	-	(27 440,2)	(27 440,2)
		02	Ոչ ֆորմալ կրթության ծրագրեր	-	-	(27 440,2)	(27 440,2)
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(27 440,2)	(27 440,2)
	6		Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	(81 741,0)	116 987,0
		1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	-	(81 741,0)	116 987,0
		04	Ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներին տրվող փոխհատուցում	-	-	-	200 000,0
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	-	200 000,0
		06	Հրատարակչական ծախսեր	-	-	(1 272,0)	(2 544,0)

			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(1 272,0)	(2 544,0)
		07	Դպրոցականների և ուսանողների ամառային հանգստի կազմակերպում	-	-	(53 969,0)	(53 969,0)
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(53 969,0)	(53 969,0)
		08	Օլիմպիադաներ, մրցույթներ և փառատոներ	-	-	(5 000,0)	(5 000,0)
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(5 000,0)	(5 000,0)
		09	ԱՀ ռազմահայրենասիրական և արտադպրոցական միջոցառումների ծախսեր	-	-	(3 500,0)	(3 500,0)
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(3 500,0)	(3 500,0)
		10	Գիտաժողովների և խորհրդաժողովների ծախսեր	-	-	(3 000,0)	(3 000,0)
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(3 000,0)	(3 000,0)
		14	Ներառական կրթության միջոցառումներ	-	-	(15 000,0)	(15 000,0)
			ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	-	-	(15 000,0)	(15 000,0)
10			ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	(114 000,0)	(206 497,0)
	2		Ծերություն	-	-	-	(15 000,0)
		1	Ծերություն	-	-	-	(15 000,0)
		01	Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ	-	-	-	(15 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	-	(15 000,0)
	3		Հարազատին կորցրած անձինք	-	-	-	(15 000,0)
		1	Հարազատին կորցրած անձինք	-	-	-	(15 000,0)
		01	Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ	-	-	-	(15 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	-	(15 000,0)
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(90 000,0)	(127 497,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	(90 000,0)	(127 497,0)
		02	Ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ կամ զինվորական և փրկարարական ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին դրամական աջակցության տրամադրում	-	-	(10 000,0)	(20 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(10 000,0)	(20 000,0)
		03	Պետական նպաստներ	-	-	-	(7 497,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	-	(7 497,0)
		06	ԱՀ-ում ծնելիության խթանում	-	-	(30 000,0)	(50 000,0)

			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(30 000,0)	(50 000,0)
		12	Ամուսնության միանվագ նպաստների տրամադրում	-	-	(50 000,0)	(50 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(50 000,0)	(50 000,0)
5			Գործազրկություն	-	-	(24 000,0)	(39 000,0)
		1	Գործազրկություն	-	-	(24 000,0)	(39 000,0)
		03	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	-	-	(5 000,0)	(10 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(5 000,0)	(10 000,0)
		06	Պետական աջակցություն գործազուրկներին	-	-	(19 000,0)	(29 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	(19 000,0)	(29 000,0)
7			Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(10 000,0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(10 000,0)
		04	Ամենամսյա դրամական օգնություններ և պարգևավճարներ	-	-	-	(10 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	-	-	-	(10 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱՌՄԵՐ	-	-	4 800 000,0	9 400 000,0
		1	Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	2 300 000,0	2 900 000,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	2 300 000,0	2 900 000,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	2 300 000,0	2 900 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	2 300 000,0	2 900 000,0
2			Այլ ծախսեր	-	-	2 500 000,0	6 500 000,0
		1	Այլ ծրագրեր	-	-	2 500 000,0	6 500 000,0
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	2 500 000,0	6 500 000,0
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	2 458 500,0	6 500 500,0
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	-	100 000,0	100 000,0
			Շուշիի շրջանի վարչակազմ	-	-	76 000,0	76 000,0
			Քաշաթաղի շրջանի վարչակազմ	-	-	(134 500,0)	(176 500,0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N2
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի օգոստոսի 25-ի N 370-Ն որոշման

«Հավելված N 3
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՌԱՍՄՅԱԿԱՅԻՆ (ԱՃՈՂԱԿԱՆ) ՀԱՄԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	7 774 541,2	6 756 660,1	6 097 425,5	9 601 318,5
այդ թվում՝				
Փոխառու զուտ միջոցներ	7 774 541,2	6 756 660,1	6 097 425,5	9 601 318,5
1. Վարկերի և փոխառվածությունների ստացում	14 598 104,8	18 812 422,4	22 138 711,6	32 835 265,9
2. Ստացված վարկերի և փոխառվածությունների մարում	(6 823 563,6)	(12 055 762,3)	(16 041 286,1)	(23 233 947,4)

»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«18» օգոստոսի 2020թ.

N 236-Ա

ք.Ստեփանակերտ

**«ՎԻԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-
րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

1. «ՎԻԼԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ,
Հեքիմյան 7^ա) բժշկական օգնության և սպասարկման համար լիցենզիա
ստանալու վերաբերյալ հայտը բավարարել և տալ **«ընտանեկան
ստոմատոլոգիական»** գործունեություն իրականացնելու լիցենզիա,
բժշկական օգնության և սպասարկման ձևը՝ **արտահիվանդանոցային:**

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ
Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ
իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«18» օգոստոսի 2020թ.

N 237-Ա

ք.Ստեփանակերտ

**«ՊԵՏՐՈՍՅԱՆ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 26-րդ հոդվածների և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ`

1. «ՊԵՏՐՈՍՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե` Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Իսակովի 4^ա) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ. Հովհաննիսյանին`

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» օգոստոսի 2020թ.

N 169

ք.Ստեփանակերտ

**ԲՈՒՑՄԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ՍԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՃԱՌՔԻ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 22-րդ և 26-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության լիցենզավորման հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 18-ի N 05 եզրակացությունը և «Լուսինե Սլավի Սարումյան» անհատ ձեռնարկատիրոջ 2020 թվականի հուլիսի 22-ին ներկայացրած լիցենզիա ստանալու մասին հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Բավարարել «Լուսինե Սլավի Սարումյան» անհատ ձեռնարկատիրոջ հայտն ու տրամադրել բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) ապահովել սույն հրամանի առաքումը Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Աշոտ Բախշիյան

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» օգոստոսի 2020թ.

N 128

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՍՈՐԲԷՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 17-ի N365-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **Ֆիզիկական անձ Ավետիկ Ռուդոլֆի Հարությունյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00765 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2) **անհատ ձեռնարկատեր Աշոտ Ապրեսի Դանիելյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՈՆ00766 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. **Դադարեցնել՝ անհատ ձեռնարկատեր Աշոտ Ապրեսի Դանիելյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ000650 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ**

2020 թվականի օգոստոսի 17-ի

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ՂԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ
ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 19-Ի N 167-Ն
ՀՐԱՄԱՆՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

N 120-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 19-ի «Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N 138-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 167-Ն հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Լ. Ղարախանյան

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ԴԱՍՏԻԱՐԱԿԻ)
ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՑԹԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Մույն կարգով սահմանվում են հանրակրթական պետական հիմնական և նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղը (այսուհետ՝ թափուր տեղ) համալրելու մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված գործատուի և մրցույթին մասնակցող անձի կամ անձերի (այսուհետ՝ մասնակից) միջև ծագող իրավահարաբերությունները:

2. Թափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆավորման ցուցակով նախատեսված՝ ուսուցչի (դաստիարակի) չգրադեցրած պաշտոնը:

3. Հաստատությունում մրցույթ հայտարարվում է, եթե տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ(ներ)ն ունի (ունեն) մեկ դրույթ ծանրաբեռնվածություն, իսկ թափուր մնացած ժամաքանակը վեց և ավելի է: Նախադպրոցական հաստատությունում դաստիարակի մրցույթ հայտարարվում է առնվազն 0,5 հաստիք թափուր մնալու դեպքում:

4. Թափուր տեղ առաջանալու դեպքում հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն) դասաժամերը տրամադրում է նույն հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող դրույթաչափը չլրացած ուսուցչին, կարող է տրամադրել նաև համատեղությամբ աշխատող, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին:

5. Թափուր տեղ առաջանալու մասին տնօրենը տեղեկացնում է տարածքային լիազոր պետական մարմնին (շրջանի (Մտեփանակերտի քաղաքապետարանի) վարչակազմի աշխատակազմի կրթության և մշակույթի բաժնին):

6. Մրցույթը հայտարարվում է թափուր տեղ առաջանալու օրվանից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից մինչև օգոստոսի 1-ը ընկած ժամանակահատվածում առաջացած թափուր տեղերի:

7. Առաջացած թափուր տեղի համար առաջին անգամ հայտարարված մրցույթը չկայանալու դեպքում հայտարարվում է մրցույթ 2-րդ անգամ:

8. 2-րդ անգամ մրցութային կարգով չհամալրված թափուր տեղում պայմանագրային հիմունքով աշխատանքի կարող է ընդունվել՝

1) համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող՝ տվյալ ուսումնական տարվա կտրվածքով տվյալ շրջանի մեկ այլ ուսումնական հաստատությունում մրցութային շեմը հաղթահարած, սակայն ըստ առաջնահերթության աշխատանք չստացած անձը,

2) համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձը,

3) դասաժամերը կարող են նաև համատեղությամբ տրամադրվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետի:

9. Թափուր տեղը սահմանված կարգով չհամալրվելու և սույն կարգի 8-րդ կետի պայմանները չբավարարվելու դեպքում տարածքային լիազոր մարմնի ներկայացմամբ և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի (այսուհետ՝ նախարար) համաձայնությամբ մինչև ուսումնական պարապմունքների ավարտը կարող է աշխատանքի ընդունվել հարակից մասնագիտություն ունեցող անձը:

10. Հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, սակայն տվյալ առարկան չդասավանդած կամ չդասավանդող մասնագետը թափուր տեղը կարող է զբաղեցնել մրցութային կարգով:

11. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցութային կարգով, եթե՝

1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում),

2) առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 4-րդ կետի համաձայն,

3) թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,

4) առկա է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից երաշխավորված նպատակային ծրագրերով ուղեգրված մասնագիտական կրթություն ստացած կամ վերաորակավորված թեկնածու,

5) առկա է տվյալ ուսումնական տարվա կտրվածքով տվյալ հաստատությունում մրցույթում հաղթող ճանաչված, բայց ըստ առաջնահերթությունների աշխատանք չստացած մասնակից,

6) թափուր ժամերն առաջացել են տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից հետո:

12. Սույն կարգի 11-րդ կետով սահմանված դեպքերում աշխատողի հետ ըստ անհրաժեշտության կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր՝

1) 1-ին ենթակետով ժամանակավորապես առաջացած թափուր տեղի ժամանակահատվածով,

2) 4-րդ ենթակետով՝ ուղեգրման կամ նպատակային ծրագրերի ժամկետներով,

3) 5-րդ և 6-րդ ենթակետերով՝ մինչև ուսումնական պարապմունքների ավարտը, անհրաժեշտության դեպքում ընդգրկել նաև քննաշրջանը:

13. Մրցույթն անց է կացվում երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Յուրաքանչյուր փուլի համար Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կողմից մշակվում է հարցաշար (այսուհետ՝ հարցաշար)՝ 100 հարց գրավոր փուլի համար և 100 հարց զուտ առարկայական - մասնագիտական բանավոր փուլի համար: Մասնագիտական հարցերի մեջ կարող են լինել գործնական առաջադրանքներ, որոնք կազմվում են մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կողմից՝ ըստ նախանշված թեմաների: Հարցաշարերը հաստատվում են նախարարի հրամանով և հրապարակվում Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության edu.nkr.am պաշտոնական կայքէջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:

2. ՄՐՑՈՒՑԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

14. Թափուր տեղը համալրելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը տարածքային լիազոր մարմնի ներկայացմամբ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարությունը հրապարակում է «Լուսարար» պաշտոնաթերթում, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության կայքէջում (edu.nkr.am) և Արցախի հանրային հեռուստատեսությամբ՝ մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ:

15. Հայտարարության տեքստում նշվում են՝

1) հաստատության անվանումը, վայրը,

2) թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը,

3) սույն կարգի 13-րդ կետով սահմանված մրցույթի անցկացման ձևերը և բովանդակությանը վերաբերող դրույթները,

4) սույն կարգի 19-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը (բնօրինակները և պատճենները),

5) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը:

16. Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

17. Մրցույթի անցկացման օրը նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3. ՄՐՑՈՒՑԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

19. Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը հաստատության տնօրենին է ներկայացնում՝

- 1) դիմում (Ձև 1),
- 2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- 3) անձը հաստատող փաստաթուղթ,
- 4) աշխատանքային գրքույկ,
- 5) ինքնակենսագրություն (Ձև 4),
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

7) այլ պետությունների քաղաքացիների՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև գինգրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

20. Տնօրենը կամ նրա կողմից նշանակված պատասխանատու աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

21. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը: Այդ հիվանդությունների ցանկը հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը.

4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

4. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

22. Հանձնաժողովը ձևավորվում է մրցույթի անցկացմանը նախորդող աշխատանքային օրը, անվանական կազմը հաստատում է շրջանի շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և մշակույթի բաժնի վարիչը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

23. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝

1) հանձնաժողովի նախագահը շրջանի շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և մշակույթի բաժնի վարիչն է (վարիչի պաշտոնակատարը) կամ բաժնի ներկայացուցիչը.

2) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության ներկայացուցիչը, տվյալ հաստատության տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը) կամ տնօրենի ուսումնական զծով տեղակալը, երկու ուսուցիչներ այլ հաստատություններից՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն հինգ տարվա փորձ ունեցող):

24. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Քվորում չապահովելու դեպքում նիստը կարող է հետաձգվել երկու անգամ՝ մինչև երեք աշխատանքային օրով:

25. Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից (ով հանձնաժողովի անդամներից մեկն է) առանձին մատյանում և պահպանվում են տվյալ դպրոցում: Մատյանն ավարտվելուց հետո արխիվացվում է օրենքով սահմանված կարգով:

26. Մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու դեպքում հանձնաժողովը հիմնավոր պատճառաբանությամբ մասնակցին գրավոր ներկայացնում է մերժման իրավական հիմքերը (իրավական ակտի անվանումը, դրույթը):

27. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ապա հանձնաժողովի կողմից

ընդունվում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում, և սույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է մրցույթ 2-րդ անգամ:

5. ԳՐԱՎՈՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՓՈՒԼ

28. Մրցույթն անցկացվում է բացառապես նախարարի հրամանով հաստատված հարցաշարի հիման վրա:

29. Գրավոր փուլի համար հանձնաժողովը կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած հարցաշարի 100 հարցից և դրանց երեք ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է, որը նշված է հարցաշարում:

30. Գրավոր փուլն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում:

31. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովի քարտուղարը ստուգում է մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ: Մասնակցի մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց տասը րոպե առաջ:

32. Մասնակցին արգելվում է իր հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր:

33. Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, պատասխանում է մասնակիցների մրցույթի անցկացմանը վերաբերող հարցերին, ինչպես նաև տեղեկացնում է բանավոր փուլի անցկացման ժամի մասին:

34. Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցների թվաքանակով պատճենահանված թեստային առաջադրանքը բաժանում է մասնակիցներին (ոչ մի դեպքում մեկ այլ թեստային առաջադրանք չի տրվում), մասնակիցը թեստային առաջադրանքի վրա լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը և ստորագրում:

35. Թեստավորման սկիզբը հայտարարելուց հետո մասնակիցը ծանոթանում է առաջադրանքին, յուրաքանչյուր առաջադրանքի համար ընտրում է մեկ պատասխան և դրա դիմաց կատարում է համապատասխան նշում: Աշխատանքն ավարտելուց հետո առաջադրանքը հանձնում է հանձնաժողովի քարտուղարին:

36. Թեստավորման ընթացքում մասնակցին չի թույլատրվում աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև դուրս գալ սենյակից: Եթե մասնակիցը ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է ավարտված:

37. Գրավոր փուլի ավարտից 15 րոպե առաջ հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցը տեղեկացվում է ժամանակի մասին:

38. Առաջադրանքի համար տրվում է 120 րոպե, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, սխալ պատասխանը՝ զրո:

39. Գրավոր փուլի անցումային շեմ է համարվում առաջադրանքի 100 հարցի առնվազն 85 տոկոս ճիշտ պատասխանը:

40. Սխալ պատասխաններ են համարվում՝

- 1) ոչ ճիշտ պատասխան նշելը,
- 2) մեկից ավելի պատասխաններ նշելը,
- 3) ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելը,
- 4) հարցի շարադրված պատասխաններից ոչ մեկում նշում չկատարելը:

41. Գրավոր փուլն ավարտելուց հետո թեստային առաջադրանքների ստուգման համար տրվում է մեկ ժամ:

42. Ստուգված առաջադրանքի միավորի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, իսկ անհամաձայնության դեպքում կցվում է հանձնաժողովի համապատասխան անդամի կարծիքը:

43. Հանձնաժողովի նախագահը բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ՝ գրավոր փուլի արդյունքները և մրցույթի բանավոր փուլ անցած մասնակիցների անունները հրապարակելու համար:

44. Գրավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, դրանք կարող են բողոքարկվել հանձնաժողովին՝ մեկ ժամվա ընթացքում:

45. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

46. Ստուգված առաջադրանքների պատճենները, ցանկության դեպքում, կարող են տրամադրվել մասնակիցներին:

6. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

47. Հանձնաժողովի նախագահը մրցույթի բանավոր փուլ անցած բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ: Ցանկացողները կարող են մնալ քննասենյակում ու հետևել բանավոր փուլին՝ մինչև ավարտը: Բանավոր փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ բանավոր առաջադրանքների հարցաշարից ընտրում է ութ հարց:

48. Յուրաքանչյուր մասնակցին տրվում է մինչև 30 րոպե՝ բանավոր փուլին պատրաստվելու համար:

49. Մասնակցի կողմից հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են ճիշտ (երկու միավոր), թերի (մեկ միավոր) կամ սխալ (զրո միավոր)՝ հանձնաժողովի մասնագետ անդամի կողմից:

50. Եթե մասնակցի տված պատասխանը գնահատվում է սխալ կամ թերի, ապա հանձնաժողովի՝ գնահատականը տվող անդամի կողմից պետք է հնչեցվի ճիշտ ու ամբողջական պատասխանը:

51. Մասնակիցը համարվում է բանավոր փուլի շեմը հաղթահարած, եթե ճիշտ ու ամբողջական է պատասխանել բանավոր ութ հարցից առնվազն վեցին:

52. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը հնարավորության դեպքում տեսաձայնագրվում է:

53. Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ մասնակցի տված պատասխանը, հանձնաժողովի համապատասխան (նշելով նրա անունը և ազգանունը) անդամի գնահատականը (ճիշտ, թերի կամ սխալ), իսկ թերի ու սխալ պատասխանի դեպքում՝ հնչեցրած ճիշտ ու ամբողջական պատասխանը:

54. Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի քարտուղարի, մասնակցի և հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

55. Յուրաքանչյուր մասնակցի համար հարցազրույցն ավարտելուց հետո լրացվում է անհատական թերթիկը (Ձև 3):

56. Հանձնաժողովի նախագահը բարձրաձայն բոլոր մասնակիցներին հայտարարում է բանավոր փուլի արդյունքները և եզրակացությունը, հաղթող ճանաչված մասնակիցների անունները, ինչն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

57. Բանավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, դրանք կարող է բողոքարկվել հանձնաժողովին մեկ ժամվա ընթացքում:

58. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

59. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Մրցույթի արդյունքների հրապարակման ամփոփիչ արձանագրության մեջ լրացվում են (Ձև 2).

- 1) մրցույթի անցկացման վայրը,
- 2) հաստատության լրիվ անվանումը,
- 3) թափուր տեղի անվանումը,
- 4) թափուր տեղերի քանակը,
- 5) մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը,
- 6) մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը,
- 7) գրավորի արդյունքը՝ մասնակիցների հավաքած միավորների կամ բալերի նշումով,
- 8) բանավոր փուլի մասնակիցների ցուցակը և «ճիշտ ու թերի» պատասխանների քանակը,

9) մրցույթի գրավոր և բանավոր փուլերն հաջողությամբ հաղթահարած մասնակիցների անվանացանկը և բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը,

10) հանձնաժողովի անդամների ստորագրությունները,

11) մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը:

60. Ամփոփիչ արձանագրությանը կցվում են՝

1) անհատական թերթիկները,

2) հանձնաժողովի անդամների կարծիք(ներ)ը (առկայության դեպքում):

8. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

61. Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցները տնօրենին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում են դիմում՝ աշխատանքի ընդունվելու համար. աշխատանքային պայմանագիրը կնքվում է դիմումը ներկայացնելուց հետո 3-օրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով:

62. Եթե մրցույթում հաղթող է ճանաչվել մեկից ավելի մասնակից, իսկ ներկայացված դիմումների քանակն ավելին է, քան թափուր տեղը, մասնակցի ընտրությունը կատարում է տնօրենը՝ նախապատվությունը տալով ըստ առաջնահերթության՝

1) առավելագույն միավորներ հավաքած մասնակցին (բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը),

2) տվյալ բնակավայրի բնակչին,

3) մասնագիտական աշխատանքային փորձի առկայությանը,

4) կրթության որակավորման աստիճանին, եթե պահպանված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» օրենքի պահանջները:

Ձև 1

Դիմումի

Արցախի Հանրապետության
ուսումնական հաստատության
(նշվում է հաստատության լրիվ անվանումը)

(նշվում է առարկայի անվանումը) -----

ուսուցչի թափուր պաշտոնի մրցույթին
մասնակցելու նպատակով հաստատության տնօրեն
պարոն/տիկին _____ -ին
_____ -ից

դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

_____ (դիմողի բնակության վայրը)

_____ (դիմողի հեռ.՝ աշխատանքային, բնակ., բջջ.)

_____ (անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

Ծնված՝ _____
օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար տրված
հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ
գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից:

Քաղաքացիությունը _____

Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ
(ընդգծել)

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ
գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու
իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի
հունիսի 15-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ
հիվանդությամբ տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել)

Համակարգչային գրագիտությունը _____

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված
փաստաթղթերը:

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար
սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ «.....»..... 20..... թ.

Ձև 2

Ամփոփիչ արձանագրություն

Արցախի Հանրապետության _____ շրջանի
(Մտեփանակերտ քաղաքի) _____

_____ համար հայտարարված մրցույթի.

1. Թափուր աշխատատեղի քանակը _____

2. Մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը _____

3. Մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը _____

4. Գրավոր փուլի ձևը _____

5. Գրավոր փուլի արդյունքը (մասնակիցների անուն, ազգանունը, հավաքած միավորները)

1)

2)

3)

6. Բանավոր փուլի մասնակիցների ցուցակը և ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը

1)

2)

3)

7. Մրցույթի գրավոր և բանավոր փուլերը հաջողությամբ հաղթահարած մասնակիցների անվանացանկը և երկու փուլերի արդյունքում հավաքած ընդհանուր միավորները (բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը)

1)

2)

3)

8. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը՝

1) Հանձնաժողովի նախագահ _____

2) Հանձնաժողովի անդամ՝ _____

3) Հանձնաժողովի անդամ՝ _____

4) Հանձնաժողովի անդամ՝ _____

5) Հանձնաժողովի քարտուղար _____

Անհատական թերթիկ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը _____
2. Առարկան _____
3. Մասնակցի անուն, ազգանունը _____
4. Տոմսի համարը _____
5. Հարցերի գնահատականները («ճիշտ» «թերի» կամ «սխալ», (միավորը թվերով)),
 - 1) _____
 - 2) _____
 - 3) _____
 - 4) _____
 - 5) _____
 - 6) _____
 - 7) _____
 - 8) _____
9. Ընդամենը հավաքած «ճիշտ և թերի» պատասխանների քանակը
 ճիշտ _____
 թերի _____
 Ընդհանուր՝ _____
10. Եզրակացություն՝ _____
 (հաղթահարել է բանավոր փուլը, չի հաղթահարել)
11. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը
 - 1) Հանձնաժողովի նախագահ՝ _____
 - 2) Հանձնաժողովի անդամ՝ _____
 - 3) Հանձնաժողովի անդամ՝ _____
 - 4) Հանձնաժողովի անդամ՝ _____
 - 5) Հանձնաժողովի քարտուղար՝ _____
12. Մասնակցի ստորագրությունը _____ :

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեությունը (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)
2. Կրթությունը, մասնագիտական կրթության որակավորման աստիճանը, կրթության վկայագրերը (դիպլոմներ, հավաստագրեր, վկայականներ)
3. Կոչումներ
4. Որակավորման տարակարգ
5. Հրատարակած հոդվածներ
6. Լեզուների իմացություն
7. Համակարգչային իմացություն
8. Այլ տվյալներ

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԳՈՒՑՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

2020 թվականի օգոստոսի 19-ի

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 23-Ի
N 112-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 010-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի 2015 թվականի հուլիսի 23-ի «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանից և կադաստրային գործից անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածքի (միասնական տեղեկանքի) ձևը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի մայիսի 23-ի N 144-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 112-Ն հրամանի հավելվածում «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի» բառերով:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՑՔԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

Կ.ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 19
ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

2020 թվականի օգոստոսի 14-ի

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՑԵՄԲԵՐԻ 5-Ի N 3-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 5-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության ոստիկանության պետի 2018 թվականի նոյեմբերի 5-ի «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների, հանրապետական գործադիր մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների), պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ նրանց կողմից ստեղծված կազմակերպությունների՝ անկախ կազմակերպատիրական ձևից), Արցախի Հանրապետության դատախազության, Արցախի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, օրենքով ստեղծված պետական մարմինների, Արցախի Հանրապետության դատարանների, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշերի նիշերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետի 2013 թվականի մարտի 29-ի N1-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 3-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հրամանի հավելվածում չընդգրկված պետական մարմիններին հատկացվում են հետևյալ համարանիշերը՝

030 LL 90	022 OO 90	010 UU 90	060 SS 90	186 CC 90-189 CC 90
040 LL 90	044 OO 90	060 UU 90	990 SO 90	381 CC 90- 395 CC 90:».
044 LL 90	055 OO 90	070 UU 90		
050 LL 90		080 UU 90		
200 LL 90		700 UU 90		

2) հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

2020 թվականի օգոստոսի 14
ք. Ստեփանակերտ

Հավելված
Արցախի Հանրապետության
նստիկանության պետի 2020 թվականի
օգոստոսի 14-ի N 5-Ն հրամանի

«Հավելված
Արցախի Հանրապետության
նստիկանության պետի 2018 թվականի
նոյեմբերի 05-ի N 3-Ն հրամանի

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆՆԵՐԻ ՆԻՇԵՐԸ

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՑԱՄԻ ԹԵՄԻ, ԱՐՑԱՄԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ,
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ), ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻՐԱՎԱԿԱՆ
ԶԵՎԻՑ), ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ, ԱՐՑԱՄԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ, ՕՐԵՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ, ԱՐՑԱՄԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ**

Հ/Հ	Տրանսպորտային միջոցը տնօրինողը	Հատկացվող համարանիշերը
1.	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արցախի Թեմ	005SS90, 005LL90, 008LL90, 341CC90 – 350CC90, 371CC90 – 380CC90
2.	Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ	316CC90 – 325CC90
3.	Արցախի Հանրապետության գերագույն դատարան, Արցախի Հանրապետության դատարաններ, Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ, Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	002SS90, 001MM90 – 010MM90
4.	Արցախի Հանրապետության հաշվեքննիչ պալատ	096CC90 – 100CC90
5.	Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի աշխատակազմ	326CC90 – 340CC90
6.	Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն	071CC90 – 080CC90
7.	Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն	050OO90, 081CC90 – 095CC90
8.	Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն	101CC90 – 110CC90
9.	Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարություն	141CC90 – 155CC90
10.	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն	100SO90, 111CC90 – 120CC90
11.	Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	195CC90-200CC90, 211CC90 – 215CC90, 351CC90 – 360CC90

12.	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարություն	121CC90 – 130CC90, 216CC90 – 218CC90
13.	Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն	131CC90 – 140CC90
14.	Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	190CC90 – 194CC90
15.	Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն	070LL90, 156CC90 – 170CC90
16.	Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն	171CC90 – 185CC90, 033UU90
17.	Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ, Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Արցախի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ, Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով	219CC90 – 220CC90, 301CC90 – 315CC90 001XN01
18.	Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն	221CC90 – 230CC90
19.	Ստեփանակերտի քաղաքապետարան (այդ թվում՝ Ստեփանակերտի ենթակայության կազմակերպությունների և հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Ստեփանակերտի ենթակայության կազմակերպությունների)	001LS90, 231CC90 – 250CC90
20.	Համայնքներ, բացառությամբ Ստեփանակերտի քաղաքային համայնքի	251CC90 – 300CC90
21.	Արցախի Հանրապետության դատախազություն	003UU90, 007OO90, 111SO01 – 126SO01
22.	Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայություն	001CC01 – 200CC01, 001SS22 – 050SS22, 077SS22, 088SS22, 099SS22, 100SS22, 111SS22, 122SS22, 220SS22 – 230SS22, 322SS22, 333SS22, 400SS22, 422SS22, 444SS22, 555SS22, 777SS22, 888SS22, 999SS22
23.	Արցախի Հանրապետության ոստիկանություն	001NU01, 100NU01, 111NU01, 001NU11, 111NU11, 001NU50 – 200NU50, 202NU50, 220NU50, 222NU50, 300NU50, 303NU50, 330NU50, 333NU50, 400NU50, 404NU50, 440NU50, 444NU50, 500NU50, 505NU50, 550NU50, 555NU50, 600NU50, 606NU50, 660NU50, 666NU50, 700NU50, 707NU50, 770NU50, 777NU50, 800NU50, 808NU50, 880NU50,

		888ՈՍ50, 900ՈՍ50, 909ՈՍ50, 990ՈՍ50, 999ՈՍ50, 555ՈՍ55
24.	Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	033ՎՎ01, 111ՎՎ01, 901ՎՎ01 – 970ՎՎ01
25.	Արցախի Հանրապետության քննչական կոմիտե	100ՂՇ01, 111ՂՇ01, 911ՂՇ01 – 960ՂՇ01
26.	Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտե	070ՕՕ90, 201ՇՇ90 – 210ՇՇ90
27.	Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե	002ՕՏ90 – 007ՕՏ90, 009ՕՏ90 – 025ՕՏ90, 100ՕՏ90, 2 00ՕՕՏ90, 222ՕՏ90, 600ՕՏ90, 800ՕՏ90, 900ՕՏ90
28.	Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտե	396ՇՇ90 – 400ՇՇ90

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ Վերաքննիչ դատարանի որոշում Վարչական գործ ԸԻԴ/0047/05/20
Վարչական գործ ԸԻԴ/0047/05/20
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան
Ռ.Զհանգիրյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ 10-ին օգոստոսի 2020թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝
Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝	Ն.Նարիմանյանի
մասնակցությամբ՝ դատավորներ	Հ.Աբրահամյանի
	Ա.Աբրահամյանի
	Գ.Գրիգորյանի
	Ի.Կարապետյանի

առանց դատական նիստ հրավիրելու քննելով ԸԻԴ/0047/05/20 վարչական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին 2020 թվականի հունիսի 16-ի որոշման դեմ հայցվոր Անուշ Վարդանյանի ներկայացուցիչ Ռ.Երիցյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը

Անուշ Վալերիի Վարդանյանը (այսուհետ՝ Հայցվոր) 2020 թվականի փետրվարի 27-ին հայցադիմում է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ Վարչական դատարան) ընդդեմ Ստեփանակերտի թիվ 1 նոտարական տարածքի նոտար Ա.Գրիգորյանի (այսուհետ՝ Նոտար)՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու, այն է՝ Վալերի Միքայելի Մնացականյանի ընդհանուր ժառանգության զանգվածի 1/6 մասով իրեն ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու, մասին պահանջով:

Վարչական դատարանի 2020 թվականի մարտի 05-ի որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունվել և հարուցվել ԸԻԴ/0047/05/20 վարչական գործը:

Վարչական դատարանի 2020 թվականի մարտի 27-ի որոշմամբ վարչական գործով հրավիրվել է նախնական դատական նիստ:

Վարչական դատարանի 2020 թվականի հունիսի 15-ի որոշմամբ Արմեն Վալերիի Մնացականյանը, Արսեն Վալերիի Մնացականյանը և Արկադի Միքայելի Մնացականյանը վարչական գործով ներգրավվել են որպես երրորդ անձինք:

Հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը 2020 թվականի հունիսի 17-ին

հայցի հիմքը և առարկան լրացնելու վերաբերյալ գրավոր միջնորդություն է ներկայացրել Վարչական դատարան, որը Վարչական դատարանի 2020 թվականի հունիսի 24-ի որոշմամբ վերադարձվել է:

Վարչական դատարանի վերոնշյալ որոշման դեմ 2020 թվականի հուլիսի 07-ին վերաքննիչ բողոք է բերել Հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը՝ որոշումը բեկանելու կամ վերացնելու մասին խնդրանքով:

Վերաքննիչ բողոքը և վարչական գործից հավելվածը Վերաքննիչ դատարանի դատական կազմին են հանձնվել 2020 թվականի հուլիսի 13-ին:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Նշված որոշման դեմ 2020 թվականի հուլիսի 20-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը:

Գերագույն դատարանի 2020 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վարչական դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և ԱՀ Սահմանադրության 18-րդ հոդվածները, սխալ է վերլուծել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածն ու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի պահանջները, անտեսել է միջնորդության մեջ վկայակոչված ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումները, կիրառել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ, 71-րդ և 72-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, ինչի արդյունքում էլ կայացրել է սխալ միջանկյալ դատական ակտ: Իր հերթին, Վերաքննիչ դատարանը՝ վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելով, անտեսել է, որ ստորադաս դատարանը՝ քննարկվող դատավարական ակտի կայացմամբ, ակնհայտ դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Հայցվոր կողմը 2020 թվականի հունիսի 17-ին հայցի առարկան լրացնելու միջնորդությամբ դիմել է Վարչական դատարան և խնդրել հիմնական հայցապահանջը բավարարելու դեպքում՝ որպես հետևանք, վերացնել նաև բարենպաստ վարչական ակտն ընդունելը մերժելու մասին որոշումը: Միջնորդությունը դիտարկելով որպես հայցադիմում, Վարչական դատարանն արձանագրել է, որ այն հանդիսանում է հիմնական հայցապահանջ և բաց է թողնված վիճարկման հայցով Վարչական դատարան դիմելու առավելագույն ժամկետը, չկա այդ ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն, ինչը հանգեցնում է Հայցվորի ներկայացուցչի՝ հայցի առարկան լրացնելու հայցադիմումը վերադարձնելու հետևանքին:

Վերաքննիչ դատարանը, իր հերթին, գտել է, որ Վարչական դատարանին ներկայացվել է ոչ թե հայցադիմում, այլ՝ միջնորդություն, որի քննության արդյունքում կայացրած որոշման բողոքարկման կարգ ԼՂՀ

վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում, ուստի վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

Ըստ բողոքաբերի՝ Վարչական դատարանը, ներկայացված միջնորդությունը քննարկելով որպես հայցադիմում, խախտել է հայցվորի տնօրինչականության սկզբունքը և ակնհայտորեն դուրս եկել իր լիազորությունների շրջանակներից: Իր հերթին, Վերաքննիչ դատարանը, պարտավոր էր վերաքննության կամ այլ կարգով բողոքը քննության առնել և արձանագրել առերևույթ դատական սխալի առկայություն, այսինքն՝ դատական ակտը բեկանելու հիմք:

Բողոքաբերը փաստարկներ և հիմնավորումներ է ներկայացրել նաև Վարչական դատարանի կայացրած միջանկյալ դատական ակտի դեմ և խնդրել Գերագույն դատարանի դիրքորոշումը՝ միասնական դատական պրակտիկա ձևավորելու հարցում:

Վերոգրյալների հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել ԸԲԴ/0047/05/20 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 2020 թվականի հուլիսի 16-ի որոշումը և բողոքը կրկին ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության, կամ բեկանել նաև Վարչական դատարանի 2020 թվականի հունիսի 24-ի որոշումը:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Սույն բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վարչական դատարանը 2020 թվականի հունիսի 24-ին կայացրել է որոշում «Հայցի առարկան և հիմքերը լրացնելու հայցադիմումը վերադարձնելու մասին»՝ հետևյալ եզրափակիչ մասով. «ԸԲԴ/0047/05/20 վարչական գործով հայցվոր Անուշ Վալերիի Վարդանյանի ներկայացուցիչ Ռ.Ա.Երիցյանի հայցադիմումը՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելու՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վերադարձնել:

Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և 15-օրյա ժամկետում Վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը Վարչական դատարանում ընդունված է համարվելու սկզբնական ներկայացնելու օրը»:

2. Ըստ կայացված որոշման՝ այն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան՝ ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

3. 2020 թվականի հուլիսի 07-ին Հայցվորի ներկայացուցիչ Ռ.Երիցյանը վերաքննության կարգով բողոքարկել է Վարչական դատարանի որոշումը:

4. Վերաքննիչ դատարանը 2020 թվականի հուլիսի 16-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին, այն հիմնավորելով հետևյալ կերպ. «...սույն վարչական գործով վերաքննիչ բողոքը բերվել է Վարչական դատարանի «(...) հայցադիմումը վերադարձնելու մասին» վերտառությամբ, սակայն, ըստ էության՝ հայցի հիմքը և (կամ) առարկան փոփոխելը թույլ չտալու մասին միջանկյալ դատական ակտի դեմ, որը ... ենթակա չէ բողոքարկման»:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ԱՀ Մահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

ԱՀ Մահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Գերագույն դատարանն իր նախկինում կայացված որոշումներում արձանագրել է, որ արդար դատաքննության իրավունքը մարդու՝ դատական պաշտպանության իրավունքի իրականացումն ապահովելուն ուղղված միջազգային և ներպետական նորմերով ամրագրված և երաշխավորվող սուբյեկտիվ դատավարական իրավունքների համակցություն է, որը յուրաքանչյուրին ապահովում է օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անկողմնակալ դատարան՝ առանց խոչընդոտի, դիմելը, երաշխավորում է գործի քննությունը հրապարակայնության, կողմերի հավասարության և մրցակցության պայմաններում իրականացվելը, ապահովում է հիմնավորված դատական ակտ ստանալը, ինչպես նաև երաշխավորում է դատական պաշտպանության իրավունքի խախտմանը հանգեցնող արդար դատաքննության իրավունքի մաս կազմող որևէ իրավունքի խախտման վերացման հնարավորությունը:

Գերագույն դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նախնառաջ խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու անձի իրավունքը, իսկ մյուս կողմից՝ դատարանի պարտականությունը՝ քննելու գործը և նրանով կայացնելու օրինական և հիմնավորված որոշում: Խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան: Ընդ որում՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներն առաջին ատյանի դատարան են դիմում հայցադիմում (դիմում) ներկայացնելու միջոցով: Հայցը կամ դիմումը դատարան ներկայացնելն իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում, դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության

պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ իրավաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումներն ու բողոքները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են ԱՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ և պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս աստիճանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին աստիճանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված բողոքների հանդեպ վերադաս դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի:

Գերագույն դատարանն արդեն իսկ փաստել է, որ Արցախի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների փաստացի իրականացմանը (օրինակ՝ ԸԻԴ/0006/04/20 սնանկության գործով 2020 թվականի հուլիսի 03-ի որոշում):

Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ անձի բողոքարկման իրավունքը պետք է ուղեկցվի բավարար երաշխիքներով, որոնք հնարավորություն կտան դատական ակտը բողոքարկող անձանց արդյունավետ օգտվելու վերադաս աստիճանի մատչելիությունից, ներառյալ նրանց կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամադրումը:

Գերագույն դատարանը փաստում է, որ ցանկացած պարագայում, դատական ակտը չի կարող համարվել արդարացի և իրավաչափ, եթե դատարանն այն կայացնելիս դատական սխալ է թույլ տվել: Դատական պաշտպանության տարրերից մեկն էլ պետության կողմից այնպիսի երաշխիքի սահմանումն է, որը հնարավորություն կտա առաջին աստիճանի դատարանի թույլ տված դատական սխալն ուղղել: Այս առումով վերաքննիչ դատարանը, որպես դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգող աստիճան, հենց հանդիսանում է այդ երաշխիքը:

Ոչ լրիվ վերաքննության պարագայում վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացումը դրսևորվում է Առաջին աստիճանի դատարանի

դատական ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու պահանջով վերաքննիչ ատյան դիմելու և օրինական ու հիմնավորված պահանջների բավարարում ստանալու իրավունքներում: Մակայն, անհրաժեշտ է, որ բողոքարկողը ճիշտ իրականացնի վերաքննիչ ատյան դիմելու իրավունքը, իսկ դատարանը բողոքը վարույթ ընդունի օրենքին համապատասխան: Վերաքննիչ դատարանը նման որոշում է կայացնում, եթե բողոքը վարույթ ընդունելիս ստուգում և պարզում է, որ անձը վերաքննիչ բողոքարկման իրավունք ունի, այսինքն՝ առկա են վերաքննիչ բողոքարկման իրավունքի նախադրյալները և պահպանվել են վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված կանոնները՝ պայմանները:

Այսինքն՝ ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցի քննարկման փուլում Վերաքննիչ դատարանի խնդիրն է պարզել միայն երկու հանգամանք՝ օժտված է արդյոք բողոքաբերը բողոքարկման իրավունքով և պահպանված են արդյոք վերաքննիչ բողոքին առաջադրված ձևական պայմանները:

Վերը շարադրված դիրքորոշումները համադրելով սույն նյութի փաստերին և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, ստորև ներկայացվող պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանն իրավակիրառ գործունեության յուրաքանչյուր փուլում իր դատավարական գործառույթներն իրականացնելիս ունի իր լիազորությունները, որոնք պայմանավորված են հենց այդ փուլի խնդիրներով: Վերջիններս կարելի է տարանջատել վերաքննիչ վարույթի հարուցման նախապատրաստության և վերաքննիչ դատաքննության փուլերի: Նշվածներից յուրաքանչյուրում Վերաքննիչ դատարանն օժտված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հատուկ լիազորությունների շրջանակով: Այսպես՝

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում գործը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Նշված կարգավորումից հստակ բխում է, որ ներկայացված վերաքննիչ բողոքի վարույթ ընդունելու նախապատրաստական փուլում Վերաքննիչ դատարանը ստուգում է միայն վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերի առկայությունը:

Վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերը նախատեսված են ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ և 117.7-րդ հոդվածներում: Այսպես.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

- 1) չեն պահպանվել նույն օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջները.
- 2) բողոքի շրջանակում առերևույթ բացառվում է դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայության հնարավորությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.
- 3) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.

4) մինչև վերաքննիչ դատարանի՝ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 117.9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

Իր հերթին, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել է, որ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝

1) նույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում անձը չի վերացրել բողոքում առկա սխալները, որոնց չվերացնելն արգելք է բողոքի քննության համար, կամ բողոքը բերել է նույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ կամ նույն օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.

2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է.

3) բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

4) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման.

5) բողոքարկվել է այն դատական ակտը, որն ընդդատյա չէ վերաքննիչ դատարանին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը 2020 թվականի հուլիսի 16-ին որոշում է կայացրել վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին, այն հիմնավորելով հետևյալ կերպ. «...սույն վարչական գործով վերաքննիչ բողոքը բերվել է Վարչական դատարանի «(...) հայցադիմումը վերադարձնելու մասին» վերտառությամբ, սակայն, ըստ էության՝ հայցի հիմքը և (կամ) առարկան փոփոխելը թույլ չտալու մասին միջանկյալ դատական ակտի դեմ, որը ... ենթակա չէ բողոքարկման»:

Այսինքն, Վերաքննիչ դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելու փուլում եզրահանգումներ է արել բողոքարկված դատական ակտի «էություն» վերաբերյալ, գնահատել բողոքաբերի կողմից Վարչական դատարան ներկայացված միջնորդության բնույթն ու դրա վերաբերյալ Վարչական դատարանի կայացրած միջանկյալ դատական ակտը, ինչը կարելի էր անել միայն հարուցված վերաքննիչ վարույթի շրջանակներում:

Անդրադառնալով վերաքննության կարգով բողոքարկված միջանկյալ դատական ակտին, Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ վարչական դատավարության կարգով բողոքարկման ենթակա են ոչ թե բոլոր, այլ միայն օրենքով սահմանված դատական ակտերը: Վերջիններիս ցանկը ներառված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին.

3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.

5) վրիպակները, գրասխալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.

6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.

7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին.

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կամ գործի քննությանը չմասնակցած անձանց դիմումով դատական ակտը վերանայելու դիմումների վերաբերյալ որոշումը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոք է ներկայացվել Վարչական դատարանի՝ «Հայցի առարկան և հիմքերը լրացնելու հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ: Վերջինս կայացվել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վկայակոչմամբ՝ նույն օրենսգրքի 72-րդ հոդվածով՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները պահպանված չլինելու հիմքով: Որոշման եզրափակիչ մասն ունի հետևյալ տեսքը.

«ԸԲԴ/0047/05/20 վարչական գործով հայցվոր Անուշ Վալերիի Վարդանյանի ներկայացուցիչ Ռ.Ա.Երիցյանի հայցադիմումը՝ հայցի հիմքը և առարկան փոփոխելու՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վերադարձնել:

Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և 15-օրյա ժամկետում Վարչական դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը Վարչական դատարանում ընդունված է համարվելու սկզբնական ներկայացնելու օրը»:

Ըստ կայացված որոշման՝ այն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ դատարան՝ ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

Այսինքն, անկախ այն հանգամանքից, թե ինչն է հիմք հանդիսացել Վարչական դատարանի համար տվյալ որոշումը կայացնելիս (ներկայացված միջնորդությունը, թե՛ հայցադիմումը), այն իրենից ներկայացնում է հայցադիմումը՝ ձևական սխալների հիմքով (այսինքն՝ շտկման ենթակա և նորից ներկայացնելու հնարավորության պարզաբանմամբ) վերադարձնելու մասին միջանկյալ դատական ակտ: Ըստ այդմ, Վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման և դրա վերաբերյալ ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը չի կարող մերժվել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.7-րդ հոդված 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Նշվածից բխում է, որ ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ չընդունելով Վերաքննիչ դատարանը սահմանափակել է բողոքաբերի՝ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքը:

Գերագույն դատարանը գտնում է, որ դատավարական և նյութական իրավունքի նշված խախտումները հիմք են հանդիսանում Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի մյուս հիմնավորումներին, ապա Գերագույն դատարանը դրանց չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ վարույթ հարուցված չլինելու և դրանց վերաբերյալ որևէ քննություն իրականացված չլինելու պայմաններում, այդ հարցերի վերաբերյալ վճաբեկության կարգով քննություն իրականացվել չի կարող:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.16 - 118.19-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ԸԻԴ/0047/05/20 վարչական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին, 2020 թվականի հուլիսի 16-ի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ն.ՆԱԲԻՄԱՆՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**